

I

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(Ծննդյան 125-ամյակի առթիվ)

Ա.ՎԱԳ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ավետիք Իսահակյանը XX դարի ճակատը դարդարող բանաստեղծներից է, ամենից շատ ժողովրդայնություն վայելող և դեռ կենդանության ժամանակ լեզունդ դարձած անհատականություն: Նա հայ դրականության երկնակամարում շողողացող այն աստղերից էր, որն իր ստեղծած գրական անմահ արժեքներով բռնել է հավերժի ճամփան, դարձել ընթերցողների սրտի թարգմանն ու անզուգական արտահայտիչը: Իսահակյանի պոեզիան հայոց բանաստեղծական հանճարի ամենախմաստուն արտահայտություններից է: Իսահակյանի մասին շատ է դրվել ու դեռ պիտի գրվի՝ Գրականագետների ամեն մի սերունդ նորովի է ընթերցում նրա ստեղծագործությունները, նոր ձևերով ու եղանակներով պեղում նրա թողած գանձերը, հայտնաբերում բացահայտում այնպիսի շերտեր, որոնք ընթերցողին մինչ այդ անհայտ են մնացել:



Դեռևս ստեղծագործական կյանքի արշալույսին նրա ոգեչնչողն ու խորհրդատուն է եղել իր ուսուցչապետը՝ Հովհաննես Հովհաննիսյանը: Մեծն Թումանյանի և Վերնատան անդամների հետ նա խանդավառվել է, հասակ առել, ճանաչվել ու հռչակվել: Նրա բանաստեղծական շքեղ մուտքի առիթով իր ջերմ խոսքն է բերել Նիկոլ Աղբալյանը: Այնուհետև սկսվել է մաքառումները

րով լի վերընթաց ճանապարհը, որին ուղեկցել են արժեքավորումներն ու գնահատումները:

Ավետիք Իսահակյանին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններով հանդես են եկել Ն. Աղբալյանը, Ա. Ինճիկյանը, Հ. Ղանալանյանը, Գ. Հովհաննիսյանը, Լ. Մկրտչյանը, Էդ. Ջրբաշյանը, Լ. Հախվերդյանը, Հր. Թամրազյանը, Ս. Աղաբաբյանը, Ս. Աարինյանը, Ավիկ Իսահակյանը և ուրիշներ: Սակայն հարցի դրվածքը մշտապես ենթակա է հայացքների նորոգության և փաստական նոր հիմնավորումների:

Մեծանուն բանաստեղծի ծննդյան 100-ամյակի (1975թ.) օրերին և դրանից հետո հրատարակվեցին նրա մի շարք անտիպ ու քիչ հայտնի ստեղծագործությունները, նամակները, օրագրությունները, խտացումները, գրառումները, հուշերը, հոգվածները, հարստացավ արխիվային ֆոնդը, լույս տեսան Իսահակյանի «Արվեստի մասին», «Հիշատակարան», «Հայդուկի երգերը» գրքերը և այլ ժողովածուներ:

Իսահակյանագիտության արդի փուլը նշանավորվում է բանաստեղծի գիտական կենսագրության ստեղծումով, նրա անձնական-հասարակական կյանքի անհայտ էջերի բացահայտումով, տպագիր և անտիպ գործերի նորովի դնահատումներով, ոուս և համաշխարհային գրական կապերի, առնչությունների մեջ նրա տեղն ու դերը արժեքավորելու միտումներով:

* * *

Ավետիք Իսահակյանն իր բանաստեղծական կյանքի արշալույսին բաղում երգեր է գրել, բայց ամենից շատ երգել է սերը, սիրած աղջկան, նրա պատճառած դառնագին ցավերն ու տանջալից ապրումները: Հետազոտողներից շատերը սովորաբար Իսահակյանի սիրերգությունը գիտել են ժամանակատարածային նույն հարթության վրա, առանց նշմարելու մոտիվի ներքին անցումների որակական ու իմաստային առանձնահատկությունները: Մինչդեռ անհրաժեշտ է պարբերացման ենթարկել բանաստեղծի սիրերգությունը, բացահայտել նրա զարգացման ղդայական-հոգեբանական և իմաստասիրական հղումները:

Հայ սիրերգականներից յուրաքանչյուրն ինքնատիպ ձևով է թափանցել մարդկային հոգու դաղտնարանները և որոշակի հետք թողել համաշխարհային սիրերգության մեջ: Միջնադարում, երբ կրոնական կապանքներից ու դոգմատիկ օրենքներից ձերբազատվում էին արվեստն ու դրականությունը, երբ վերածնվող մարդու մեջ պաշտամունքի առարկա էր դառնում գեղեցիկը, երկնային սերը իջնում էր երկրի վրա, փառաբանում աշխարհիկ կյանքը, կնոջ գեղեցկությունն ու նվիրական սերը: Գրիգոր Նարեկացին, առաջիններից մեկը համաշխարհային քնարերգության մեջ, կատարեց մեծ սխրանք՝ բանաստեղծությունը ներարկելով աշխարհիկ կյանքի, գեղեցկության, բնության և մարդկային հոգու զարթոնքի ներքին բռնկումներով: Սիրո թեմայի հետագա ճանապարհը արգասավորվեց հատկապես վերածնության հանճարների՝ Դանտեի, Պետրարկայի, Բոկաչոյի և ուրիշների ստեղծագործությամբ: Հայ միջնադարյան սիրերգականների փայլուն համաստեղծության մեջ հայրեններն ու Սայաթ-Նովայի երգերը հրաշագործ արվեստի ուժով ներկայացրեցին կնոջ գեղեցկությունն ու սիրո արարչությունը: Հենց նրանք էլ, ինչպես նաև հետագայում Պետրոս Դուրյանն ու Հովհ. Հովհաննիսյանը ուղղակի նախորդեցին Ավ. Իսահակյանի սիրերգությանը՝ խորացնելով կապը ուսմանտիզմի ավանդների հետ:

Ռոմանտիզմը մի ամբողջ հեղափոխություն նշանավորեց համաշխարհային սիրերգության ասպարեզում: Պոեզիան ազատագրելով ձևի և

1 Հանգամանորեն տե՛ս Ա վ ա գ ի ն ա չ ա տ ր յ ա ն. Ավետիք Իսահակյանի սիրերգությունը. Երևան, 1985, էջ 1-126:

բուվանդակութեան ռացիոնալիստական կապանքներից և հուշակելով ստեղծագործական ազատութեան սկզբունքը, ոռոմանտիզմը հնարավորութիւն ընձեռեց թափանցելու անհատի ներաշխարհի ամենաթաքուն ծալքերը և բացահայտելու նրա բնական զգացողութիւնները: Բայց հայկական ոռոմանտիզմի անհատը երկփեղկված էր մասնավոր անձի և քաղաքացու միջև: Եվ քանի որ մեզ վիճակված պատմական ճակատագրով քաղաքացին բացարձակ է, ուստի և գերիշխում է մասնավոր անձի էմպիրիկ զգացողութիւններին:

Չունիմ քեզ սեր, չունիմ քեզ սեր,
Ես սիրում եմ հայրենիք:

Էթիկական ընտրութիւնն այսպես է լուծում Շահապիզի քնարական հերոսը: Իսկ Նալբանդյանը հրաժարվում է Ապոլլոսի քնարից, քանզի ընդունակ է «դո՛ւ ըբերել կյանքը սիրած աղջկան»:

Հովհ. Հովհաննիսյանը փորձեց ներդաշնակել անհատի հոգեկան երկփեղկումը և զգալ նրա անձնական զգացողութիւնների թովչանքը՝ սիրո, կարոտի, թախծի արձագանքներում և սակայն օբյեկտի և սուբյեկտի միջև տակավին սլաճպանվում է մի որոշ անջատում: Սերը և աղջիկը ուրվագծվում են էկզոտիկ հեռավորութեան վրա և ոռոմանտիկական էսթետիզացիան սիրած էակին պատկերում է սաստիածուհու սրբապատկերով՝ «Եվ եղեմական տաճարում կանգնած կուղևի տեսնել ես քեզ Անահիտ»:¹ Ահա այստեղ է Ավետիք Իսահակյանի հայանութիւնը: Նա անձնականացրեց սերը, անջատեց կեցութեան էմպիրիկ այլևայլ ազդակներից, ոռոմանտիկական պաճուճանքներից և դարձրեց այն տիեզերական կեցութիւն: Դա իր և միայն իր սերն է Շուշանիկի հանդեպ, որքան անձնականացված, նույնքան համամարդկային, ճիշտ այնպես, ինչպես սիրո խորհրդանշանը համաշխարհային մեծ սիրերգականների պոետական մտապատկերներում՝ Դանտեի Բեատրիչեն, Պետրարկայի Լուլուան, Բոկաչոյի Ֆիամետան, Սայաթ-Նովայի Աննան, Լերմոնտովի Վարենկա Լուպուլսինան, Բյուրյու Էլյուրով Մենդելեևան, Եսենինի Շահանն:

Այսպիսով, Իսահակյանը որակական նոր ստատիստի բարձրացրեց հայ սիրերգութիւնը: Ժիշտ է նկատված, որ «Իսահակյանի սիրային բնութագրութիւնը ոչ թե «հատուկ» սիրային քնարերգութիւն է, այլ իր աշխարհազգացման բնական հաղորդումը սիրային երգերի մեջ ... Իրա համար էլ Իսահակյանի սիրային քնարն անկրկնելի է», սերը ոչ թե «մոտիվներից մեկն է, այլ կենտրոնաձիգ առանցքը՝ ինչին էլ վերարժարի դրվածքը: Սերը իբրև կեցութեան ներդաշնակութեան տիպոսը, իբրև աշխարհազգացում, մինչև իսկ՝ աշխարհայացք, իբրև դեղադիտական դուվանանք»²:

Ցաված սիրարս նրդեր հյուսեց,
Երդեց անուշ ու տիուր
Սիրտըս հալվեց, արցունք հոսեց,
Վճիտ ինչպես ջինջ աղբյուր:

2 Լ. Հ ա խ վ ե ռ դ յ ա ն. Մտորումներ. Երևան, 1984, էջ 29, 30:

.....

Հավքերի պես երգերս թռան,
 Հովերի հետ գնացին,
 Արցունքներս ցողեր դառան,
 Վարգի ծոցում շողացին:

Անցան օրեր – եկավ մահը,
 Սառ հողի տակ քուն մտա.
 Իմ արցունքով շաղաղ վարգը
 Շվաք ձգեց իմ վրա:

Հովերն եկան, շիրմիս վրա
 Տխուր երգեր երգեցին, –
 Ա՛խ, իմ անուշ, իմ վաղուցվա
 Հյուսած երգերս երգեցին ...

Այսպես է սկիզբը առնում սիրո պատմությունը: Ու երբ թերթում ենք այդ պատմության էջերը, տեսնում ենք, թե ինչպես է սերը ձուլվում բանաստեղծի հոգեկան ղեղումներին, դառնում է կենսագրական փաստ, հյուսելով զգացմունքի մի անկրկնելի պատմություն՝ բնության ձայնով արթնացած, սակայն նախապես գուշակված մերժումի ու անջատման ճակատագրական անեծքով: Ինչպես տեղի խորն է վերասլում պատանեկան իր անուրջների փուլզումը: Հուսահատության, թախծի մորմոքները մթագնում են իրականության գույները և նրա վառ երազները սուզում չարագուշակ տեսիլների մշուշում: Եվ վշտի ողբերգական շեշտերը առավել տագնապալից են հնչում սիրո պաշտամունքի միստիկական պանծացումի հանդեպ: Մարդու հոգին, ասում է Իսահակյանը, «պիտի շրջե տիեզերքի հեռավոր խորշերն ու անկյունները և ամեն տեղից պիտի ձանձրանա»։ «Ամենից հագեցած, անհագ պիտի մնա միայն սերը ... նա միշտ սիրո ծարավ կլինի. նրա մխիթարությունը – սերը պիտի լինի, պիտի մարդը սիրածին գրկե և սուզվի տիեզերքի մեջ»։ Թախծում է բանաստեղծը և նրա հետ թախծում է ամբողջ տիեզերքը, նրա պարտեզում լաց է լինում «լալկան ուռին», նրա վշտին արձագանքում են հովերը, հավքերը, լուսինն ու ասաղերը: Խոր հիասթափությունը, սակայն, անդարձության մեջ չի սուզում բանաստեղծի անհատականությունը, այլ ամրապնդում է նրա կամքը, նրա երևակայության թռիչքը տանում դեպի նպատակի գիտակցումն ու հասարակությունից վրեժ լուծելու ոռոմանտիկական հեզնանքը:

Սիրո, վշտի, կարոտի ու ընդվզումի քնարական զեղումները Իսահակյանի պոեզիայում կառուցում են սիրո մի յուրօրինակ ուտոպիա, ուր բանաստեղծը փորձում է խաղաղել իր այնպիսի հոգին բնության հովվերգական անձամբերում («Արաղի ափին բոստանս լինի, Սալվի ուռ տընկեմ, վարդեր ու լալա ... Ու սրտով սիրած Շուշանս լինի, օջախի կողքին գուր-

դուրենք իրար ...») կամ «պլատոնական սիրո» միստիկական երազներում երեակայում «դյուլթական կուլյսի» Հայտնություն տեսիլքը.

Տեսնում եմ ահա, որ բարձունքներից
 Իջնում է մի կուլյս լազուր թևերով,
 Որ զարթնեցնի, թրոցնե հոգիս
 Երկնի համբույրով, աստգերի բույրով:

Եվ տիվ և գիշեր ես սպասում եմ,
 Թե ահա կըգա կուլյսը դյուլթական,
 Որ զարթնած հոգով երգեմ վեհորեն
 Երազըս չքնաղ, մարգարեական ...

Սիրո այս ուտոպիան Իսահակյանը փայփայեց իր ամբողջ կյանքում, որակական նոր գծեր ու գույներ բերեց Հայ սիրերգությանը, սոցիալական-փրկիսոփայական խորախորհուրդ լիցք հաղորդեց նրան:

Սերը և բանաստեղծությունը Իսահակյանի պոեզիայում նույնարժեք անքակտելի հասկացություններ են: Բանաստեղծությունը սեր է արձագանքում, սերն արարվում է բանաստեղծությամբ: «Սերն է քառսից կյանք ստեղծել, ծաղիկներին գույն ու բույր տվել, թռչուններին՝ երգող քնար ու սրինգ»⁴, «... Քնարերգության միակ աղբյուրը սերն է, նա ինքն է բանաստեղծությունը: Առանց այդ զգացումի չկա ո՛չ երգ, ո՛չ արվեստ, ո՛չ պոեզիա, և կրոն, միստիկա»⁵: Այս և ուրիշ գրառումները ինքնին հուշում են, թե ինչ մոգական գաղտնիք ունի սերը Իսահակյանի պոետական խառնվածքի ակունքներում:

Անձնական սեր երգեր Իսահակյանը, թե սիրած աղջկա մերժման ապրումները, կորցնել հին սերը, թե գտնել նորը, հասներ երազանքի իր իգեալին, թե ոչ, նա իր ողջ կյանքում ու ստեղծագործության մեջ անշեղ պահեց մեծ սիրո կրակը: Երբեք սերը չի նեղացվել, փոքրացել դարձել քաղքենիական անձուկ զգացում: Անկախ անձնական տիրություն ու փոթորկալից հոգեվիճակների ծանր պահերից ու մտորումներից, բանաստեղծը կոնկրետ փաստերից վերացավ, արվեստի մեծ ճանապարհով տարավ Համամարդկային ապրումների ու խոհերի նկարագիրը, լայնացրեց ու խորացրեց իր անհուն սերը մարդու և աշխարհի նկատմամբ հաղորդելով նրան Համամարդկային հնչեղություն, բարձր խոհական երանգ:

* * *

Անձնական մեծ դրամա է ունեցել բանաստեղծը. մերժված սեր ու ողբերգություն: Մորմոքել էր, բողոքել և «ախ» ու «վախի» հառաչանքներով լցրել իր պոեզիան: Նա էլ մեծ նախահոր՝ Սայաթ-Նովայի նման «մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկած սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը, զգում է, որ էրվում է, վերջանում է ին-

4 «Հայաստանի աշխատավորուհի», 1975, № 10, էջ 4:

5 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ավ. Իսահակյանի ֆոնդ, № 95-1:

քր, բայց մնում է արի ու բարի, անչար ու անշառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, Հաստատուն սիրով և՛ դեպի էն «զալումը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և՛ դեպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրճվեցին էն կրակով, որի մեջ էրվում էր ինքը, և՛ դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Զայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց»⁶:

Հովհ. Թումանյանի՝ Սայաթ-Նուվային տված այս սքանչելի բնութագրումը շատ կողմերով վերաբերում է նաև Իսահակյանին: Բանաստեղծը ծանր է ապրել առաջին սիրո ողբերգությունը: Չնայած իր ամբողջ կյանքում ունեցել է և ուրիշ սերեր, ուրիշ կարոտներ, բայց քուն թե արթուն վառվել է շուշիկյան մեծ սիրո հրդեհով:

Սեգ արծիվը աչքս է կտցում,
Աչքս կարոտ՝ Շուշանին.
Անգութ գայլը սիրտս է հանում,
Սիրտըս ծարավ՝ Շուշանին:

Սիրած աղջկա նկատմամբ ունեցած անզուգական սերն էլ արարեց բանաստեղծություն, լեզենգ, բալլադ, պոեմ, փիլիսոփայական խոհ, հուշագրություններ, նամակներ, օրագրություններ, խտացումներ և այլ գրառումներ, որոնք անմահացրին ու ամբողջացրին Իսահակյանի քնարական հերոսուհու վառ կերպարը: Սիրավառ արբեցումով լցված բանաստեղծը հազարերանգ գույներով, տիեզերական պատկերներով ու բնության հարազատ կանչերով է նկարագրում իր սերը, սիրած աղջկան: Երգերի մի մասում հնչում է Շուշան անունը, մի մասում՝ ոչ, բայց դա չի խանդարում նամակների, օրագրերի և վավերագրերի միջոցով հաստատել այդ երգերի ազգակցական կապերն ու առնչությունները բանաստեղծի երազների աղջկա հետ: Ու պատգամում էր բանաստեղծը՝ «սիրով չափեցեք — այս լինի ձեր միակ չափը ամեն բան չափելիս»:

Առաջին սիրո կերպարը չխաթարվեց: Ընդհակառակը, ժամանակի մեջ հստակվեց, բյուրեղացավ: Մարդկության նախահայր Ադամի նման, Վարպետը ում էլ սիրո խոսքեր էր շշնջում, տեսնում էր միայն Շուշիկին, գրկում, համբուրում էր միայն Շուշիկին, փնտրում նրա պատկերը աստղերի ու արևի մեջ: Եվ ապրեց նա՝ սպասելով ու տենչալով միշտ Շուշիկին, և մեռավ հառաչելով ու երազելով միմիայն Շուշիկին ... Այս առումով «Լիլիթ» արձակ բանաստեղծությունը ինքնակենսագրական մի պատում է:

Իսահակյանի բանաստեղծության ակունքներում փորձեցինք հայտնաբերել նրա սիրերգության առարկան ու զգացմունքի ծագումը և հետևել նրա հոգու բռնկումների ժամանակագրությանը: Եվ ստացվում է սիրո մի հետաքրքիր ու անկրկնելի պատմություն՝ նախապես դրդված մերժումի հոգեբանական տազնապներով: Իսկ ինչպիսի՞ արտահայտություն կունենար Իսահակյանի սիրերգությունը, եթե չլիներ մերժումը և Շուշիկը փոխադարձ սիրով հագուրդ տար բանաստեղծի թախանձանքներին: Ավելի քան մակերեսային կլիներ ենթադրել, թե այս պարագայում բանաստեղծը

6 Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1969, էջ 185-186:

կտրվեր սիրո և երջանկության ինքնաբավ վայելքին: Իրականում մերժումը սոսկ երևույթի արտաքին կողմն է և անգամ, եթե չլիներ այն, միևնույն է բանաստեղծը պիտի ստեղծեր այն, քանզի երկփեղկված էր աշխարհը և տիեզերական ճեղքվածքն անցնում էր բանաստեղծի սրտի միջով: Սերն արգեն զուտ զգացմունքի ոլորտից վերաճում է փիլիսոփայական հասկացության, ներառելով կյանքի ու գործի անքննելի առեղծվածները: Շոպենհաուերի և Նիցշեի հոռետեսության արձագանքները կան Իսահակյանի սիրերգության եզրերում: Սերը երջանկությունն է՝ խոստանում է սիրտը, սերը տառապանք է՝ հուշում է բանականությունը և այս երկու ծայրերի վրա դեգերում է Իսահակյանի սիրերգությունը, մերթ հանձնվելով աշխարհի դեմ անեծքի կրքոտ ընդվզումներին, մերթ արվում անանձնական սիրո երանավետ կարոտներին, փիլիսոփայական հաշտությանը վերլուծելով սիրո կենսաբանությունը. «Իմ երգերը պիտի լինեն իմ վերքերի մրմուռը, ցավի ձայնը, կսկիծը ... Սիրտը զգում է, իսկ երգը հայտնում է աշխարհին սրտի զգացումը — սա՛ է պոեզիան, էլ ուրիշ ո՛չ մի բան ... Զգացմունքն է պոեզիան ...»:

Զգացմունքի այս պոեզիան բանաստեղծի թափառումների հետ շարունակում էր կրել սիրո ու տառապանքի հուշերը, որոնք ավելի ու ավելի են հազնում խոհերի փիլիսոփայական վերլուծությանը: Այն, ինչ անդառնալի է, վերագրվում է վերուստ տրված ճակատագրի խաղին, որը թեև չի մարում կորստի դառնությունը, բայց ամոքում է ունայն վերջավորության քրիստոնեական ապաշխարությունը:

Ա՛խ, անհուն սեր ես ունեի սրտիս մեջ
Եվ վառ հավատ, ու բյուր հույսեր ունեի,
Բարձրաթռիչ ինչպես արծիվ վեհափառ,
Կըսուրայի գառ թևերովս երկնի մեջ:

Բայց ցնորքս մնաց մենակ կյանքիս մեջ,—
Քանզի մարդիկ, որ դժմիտ են ու դաժան,
Խորտակեցին, հոռտեցին իմ սիրտը
Եվ ցնորքը սոսկ թողին ինձ կյանքի մեջ ...

Հանգամանորեն վերլուծելով Իսահակյանական սիրո պոետական արտածումները, մենք հայտնաբերում ենք մի բացառիկ գեղեցկություն, որ արտակարգ հմայք է տալիս նրա սիրերգությանը: Դա Իսահակյանի աբստրակտական պահվածքն է սիրո գաղափարի հանդեպ: Ինչքան էլ վրդովված լինի նրա հոգին, որքան էլ դաժան լինի մերժումը, այնուամենայնիվ, սերը նրա համար հեռավորության վրա ներկայանում է որպես իր կենսագրության մնայուն արժեքը:

Էպոս բացառիկ է նաև Իսահակյանական սիրո հոգեգգայական մաքրությունը, կատարելապես կտրված կրքերի էրոտիկ բնագրներից: Իսահակյանը չէր սրբազործում պլատոնական սերը, ճանաչում էր մարմնի վայելքն ու գրավչությունը, բայց և չէր ընդունում Անակրեոնի կամ Հա-

7 Ա. վ. Ի. ս. հ. ա. կ. յ. ա. ն. Հիշատակարան, էջ 277:

Ֆիզի մերկության պաշամունքը: Տարրալուծելով սիրո կենսաբանությունը, Իսահակյանը նշում է, որ «առաջին քայլը սիրելու գեղեցկությունն է, պաշտելու քայլը — սիմպատիան, բնավորությունների հարմոնիան, իսկ սեռական ձգտումը — դա ջերմությունն է, զորեղ մագնիսը: Հաֆիզի, Բոգենչտետի երգած սերը սեռական մի մեծ ձգտում է — միություն: Այնտեղ չկա ո՛չ հարգանք, ո՛չ վիշա — միայն գեղեցկության գրավումն ու միություն մեծ փափագ ...»⁸: Այլ է սերը և սիրո իր իդեալը. «Ես Շուշիկի մեջ գտա իմ իդեալները, գեղեցիկի, վեհի ու բարոյականի, ես նրան սիրեցի — իմ բարոյական ու հոգեկան ինտերեսները միացան նրա հետ — և կազմեց մի սեր, մի երգ, մի վերք»⁹: Եվ ապա՝ «Ես Շուշիկին չէի սիրում Հաֆիզի պես, ես նրա լացը, նրա վիշտը, նրա լրջությունը, մաքրությունը, վշտալի աչքերը, մեղանխուլիան էի սիրում, ես նրա հոգեկան, բարոյական ու ֆիզիոնոմիական գեղեցկությունն ու մաքրությունն էի սիրում ...»¹⁰: Ուրեմն այն, ինչ հատկանշական է սիրած էակի համար, միաժամանակ նաև իր էություն բացահայտումն էր, այսինքն սիրած էակի մեջ նա հայտնաբերում էր նաև իր հոգու արժեքները: Ահա թե ինչու այդ սերը ուղեկցեց բանաստեղծին ամբողջ կյանքի ընթացքում, որոշ իմաստով պահպանելով նրա ասպետական վեհանձնությունը այլևայլ գայթակղություններից ու անկումից: Այս տեսակետից հատկանշական է Իսահակյանի պահվածքը Աննա Մատակյանի հանդեպ ունեցած սիրո պատմության ընթացքում: Բանաստեղծի սերը ինչ-որ տեղ մնում է չհասկացված: Նա երազում է վերստին զգալ իդեալական սիրո գեղեցկությունը, սակայն սիրած աղջկա զգացմունքները կառչում են կենցաղային կապերի սովորություն և բանաստեղծի իղձերը ներարկում թախանձանքի ու նվիրումի զգացմունքներով, որոնք ծնունդ են տալիս պոետական նուրբ ու հուզաթաթավ մեղեդիների:

Քույր իմ նազելի, նայիր քո դիմաց,
Վիրավոր, ավեր, սիրտս եմ բացել,
Ա՛խ, նվիրական ինձ քո գիրկը բաց
Եվ դուրգուրի ինձ, ես շատ եմ լացել ...

Քնքուղ ձեռներով աչքերըս սրբիր,
Մի թող ինձ լալու — ես շատ եմ լացել,
Ճակատիս մռայլ մշուշը ցրիր.
Եվ դուրգուրի ինձ, ես շատ եմ լացել ...

Կարոտի, սպասումի ու նվիրվածության անխառն զգացումներով են տոգորված Աննային ուղղված Իսահակյանի նամակները, որոնք հուշում են աղջկան, թե կա մի վերին, անանձնական սեր, որ հոգիները միացնում է հեռավոր կարոտի անուրջներով և երկրպագում կուսական անարատության աստվածային պարգևը: «Երանի նրան, — գրում է բանաստեղծը, — ով ձգտում է դեպի օստղերը, երանի նրան, ով սիրում է և չի հասնում, ով

8 Նույն տեղում, էջ 131:

9 Նույն տեղում, էջ 114:

10 Նույն տեղում, էջ 136:

միշտ թափառում է ու չի գտնում ... Մեր սերը թող լինի ոչ այս աշխարհից . հողեղեն չլինի. սիրենք իրար հեռավոր աստղերի պես. իրարուց հեռու՛, իրար սրտի մեջ ... Մի՛ աշխատիր ինձ տիրել, մեռցրու այգ նյութեղեն սերը, հոգով սիրիր, մտքով սիրիր ... երազով սիրիր ... Միշտ երազ, միշտ իդեալ, միշտ երկինք լինենք իրար համար. հեռավո՛ր, բարձր, լազուր, մաքուր»¹¹:

Նույնպիսի մի ուժանտիկ սիրավեպ է Վիկտորյա Աբովյանին գրած Իսահակյանի նամականին, որը անձնական ապրումների, տրամագրությունների, փիլիսոփայական խոհերի ու հոգու բռնկումների նոր ալիքներ է բացահայտում բանաստեղծի ներաշխարհում, հարստացնում նրա սիրերգության մատյանի իմաստալից էջերը:

Այդպես էլ ընդհատվում են ուժանտիկ սիրավեպերը և ընդհատվում են ոչ միայն բանաստեղծի տիեզերական սերը չգիտակցելու քամահարանքով, այլև սիրո իր նվիրական ու անցած հուշերին հավատարիմ մնալու ներքին բնազդով, հոգեկան ու բարոյական այն արժեքների գիտակցությամբ, որ տվել է նրան իր առաջին սիրո իգեալը: Ահա թե ինչու, իր ամբողջ կյանքի ընթացքում այդ սերը մնաց որպես կնոջ, գեղեցկության և նվիրումի խորհրդանիշ.

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամրջին,
Հորդ մաղերը – գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը սև – արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու դուխըս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի:

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի,–
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի ...

Իսահակյանի պոեզիան մի իսկական հանրագիտարան է: Քնարական էջերում, նամականերում, հուշագրություններում սերը ստեղծագործում է իրեն, տիեզերական իր վեհությունն ու հավերժական գեղեցկությունը, ցույց տալիս, թե ինչ արժե նրա առեղծվածային հմայքը անհատի հոգևոր ու ֆիզիկական ներդաշնակության համար: Իսահակյանի սիրեր-

¹¹ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1979, էջ 79 - 80:

գուլթյունն իր բարձր արվեստով, փիլիսոփայական խորությամբ ու էմոցիոնալ հագեցվածությամբ ձեռք է բերում համամարդկային արժեք:

* * *

Տարիների հետ նորոգվում է սերը, հայտնվում են նոր անուններ և զգացմունքների նոր արթնացումներ, որոնք, սակայն, անփոփոխ են պահում այն հուշերը, որ առկայծել են Իսահակյանի սիրերգության նախերգանքում: Նորից մերժումից ցավագին վերապրումներ և նորից սիրո ու մանտիկական պանծացում: Եվ սա միայն ըստ ձևի: Իրականում փոխվել է թե՛ զգացմունքի անձնական ներհակությունը և թե՛ սիրո գոյաբանական իմաստավորումը: Եվ բանաստեղծը, որ արդեն մարգարե էր և հասու տիեզերական զաղտնիքին, մի վերին ոգու մեջ սուզում է չարն ու բարին, վայելքն ու մերժումը և սիրո առասպելը գուրս բերում առօրեական կրքերի էմպիրիկ մտահոգություններից: Հայացքը հառած տիեզերքի ու բնության արարչությանը՝ նա տեսավ, որ աշխարհը շաղկապված էր սիրով, որ բնությունը նորոգվում է սիրո թարմությամբ, որ հովերը սեր են շշնջում և այդ ամենի խորհուրդը որոնելով Հին Արևելքի իմաստուն լեգենդներում, ստեղծեց սիրո Իսահակյանական միֆոլոգիան՝ հայոց բանաստեղծության ամենագեղեցիկ էջերից մեկը: Նա, որ պաշտում էր մաքուր, երկնային, բանաստեղծական սերը, կյանքը ակամա այլ բնադրներ է արթնացնում նրա կենսաբանության մեջ: Ծնվում են «Մեղքի ու զղջման երգերը»՝ իրաբաններ, հակասական ու երազային շեղումներով լեցուն: Հին Արևելքի շքեղ գույներով ու վայելքի սարսուռներով է բանաստեղծը ներկայացնում կանացի գեղեցկությունը, կյանքի գայթակղիչ սյահերի անմեկնելի ու անքննելի զգացումները:

Արևի ոսկին ծով - մագերիդ մեջ,
Գարունը ծաղկած՝ այտերիդ վրա,
Ժպտուն աստղերը աչքերումդ անշեջ ...
... Դո՛ւ, անուշաբույր, կախարհիչ մարմին,
Դո՛ւ, պուրպուր գինի՝ շքեղ, դյուլթական,
Թո՛ղ քեզնով հարբիմ ու գրկիդ մեռնիմ...
Վայելքը անմահ, կմնա միայն ...

Տարիների հեռավորությունից բանաստեղծը հաճախ է վերհիշում առաջին սիրո անուրջները և փիլիսոփայական հաշտությամբ վերապրում անցած եղելությունների անդառնալի կարոտը . «Մենակ թափառեմ, լեռների գլուխը պառկեմ . և խորհեմ . ծովերի ափին պառկեմ ու խորհեմ - տիեզերք խորհեմ, հավերժություն խորհեմ ... Եվ միշտ առաջին սիրուս յուշս - պատկերը աչքիս առաջ, ձայնը ականջիս մեջ և սրտիս մեջ երազ ու վիշտ, երգ ու արցունք»¹²: Թվում է, թե սերը պարզ, տեսանելի, շոշափելի հասկացություն է, բայց իրականում միֆ է, անկոահելի ու անբաժանելի: Իոլոր վերադիրները թերի են, անկատար սերը գինով վագր է, սերը կույր ճեղք է՝ անսանձ ու կատաղի, սերը փոթորիկ է, սերը գոհաբերություն է,

12 Ա Վ Ի ս ա հ ա կ յ ա ն . Հիշատակարան, էջ 311:

անգիմագրելի կախարհանք, միայն ժամանակն է հաղթում նրան: Այս ա-
ռեղծվածի մեջ է միֆո:

Բաղմաթիվ ստեղծագործությունների միջոցով կարելի է ցույց տալ
սիրո միֆականացումը Իսահակյանի պոեզիայում, ուր սիրո արձագանքնե-
րը ձուլվում են ընդլայնված և բնութային կանչերից անգրադարձվում որ-
պես հեքիաթ և ավանդություն: Ու մանկական երազների երանության
պարանքով ուրվագծվում է ոսկի աշխարհի հեքիաթը.

...Ուր ո՛չ մարգ կա, ո՛չ ուրուր - տարի բոլոր վառ գարուն,
Լույս աղբյուրն իր շողշողուն, դառ պարտեզներ, գալարուն,
Այնտեղ շինենք մեր բույնը, երգենք մեր սերն ու կարոտը ...

Բայց սիրո հեքիաթը վերջ չունի. և այդ հեքիաթի միֆոլոգիան է
պատմում «Ալագյաղի մանիներ» լիրո - էպիկական ասքը: Պոեմն ունի պո-
լիֆոնիկ, բաղմերանգային հյուսվածք: Նրա առանձին հատվածները ներ-
դաշնակվում են որպես մի հոյակապ սիմֆոնիա, ու ամեն մի հնչյունը, ա-
կորդը, ձայնը ունի ուրույն լիցք, ուրույն հնչեղություն: Ողբերգական
ռիթմին հաջորգում են մեղմանուշ, փափուկ, հոգեզմայլ մեղեդիներ, մերթ
խզվում, թալկանում են նվագները, մերթ պրկվում, ցնցվում առնակա-
նություններ, մերթ էլ անցյալի ու եկող ժամանակների դողանջներով լցնում
մարդկային հոգին: «Ինչպես որ լսում եմ չքնաղ երգեր, - գրում է բանաս-
տեղծը, - և իմ հոգում զարթնում են չքնաղ զգացումներ, այնպես էլ երբ
տեսնում եմ չքնաղ, վեհ ցեղեր, գեմքեր, էակներ, արարածներ՝ հոգումս
զարթնում են չքնաղ ու վեհ զգացմունքներ: Որոշ օբյեկտ իմ հոգում հա-
մապատասխան զգացմունք է ծնեցնում. օբյեկտը մեջս սուբյեկտ է դառ-
նում, զգացմունք է դառնում ... դառնում է երգ»¹²:

Հատկանշական է, որ բանաստեղծը պոեմի հերոս է ընտրում Զարո-
յին՝ մանկության օրերի սիրած աղջնակին, որը հիշողության արթնացում-
ներում երևում է իբրև երազային տեսիլք: Եվ տեսիլքի մեջ հյուսվում է
սիրո հեքիաթը, որին ձայնակցում է ամբողջ բնությունը՝ Ալագյաղի ու
Մանթաշի հովերն ու ծաղկած հովիտների անուշ բույրը: Գեղջիկական
պարզ ու շքեղ արարողություններում հնչում են սիրո արթնացման օրհ-
ններգերը: Տոհմիկ պատկերների ֆոնի վրա գծագրվում է Զարոյի արևային,
ինչ-որ չափով եթերային պատկերը՝ շողարձակ ու կենսալից: Նոր հորձան-
քով են ալիքավորվում բոցեղեն սիրո զգացումները, ժողովրդական պոե-
զիայի շռայլ պատկերներով ու համեմատություններով են ներկայացնում
կիսաիրական ու կիսավիթ աղջկա նկատմամբ տածվող հոգեկան բռնկում-
ները:

Ալ - վարդերը՝ կրծքիդ վրան,
Լույս ցողերը՝ ոտներիդ,
Հովերի հետ ծամերդ թռան
Մեռնիմ թուր - թուր ունքերիդ:

¹² Նույն տեղում, էջ 246:

Ողջ բնութիւնը լցվում է սիրո անըջանալի ու արբեցումով. ոսկեփետուր հավքերը ծափ են տալիս մի առանձին սիրով, քնքշանքով, իսկ հովերը բերում են անուշ բույրեր, չորս դին փուվում է սիրո հեքիաթը, հոսում են դինու գետերը, Վարդավառի երգն ու պարը, սերն ու համբույրը, հեթանոսական կանչն ու վայելքը ... Այս երազային հեքիաթ աշխարհում էլ սիրած աղջկա համբույրից արբած բանաստեղծի հոգին երկնում է ծփացող երգեր բնական, անկաշկանգ:

Քո աչքերըդ՝ հրեղեն ծով,-
Ծովերի պես մազեր ունիս,
Սիրտըս՝ նավակ, սերըդ՝ խենթ ծով,-
Հովերի պես նազեր ունիս:

Դու դիչերը՝ վարդի երազ,
Հոգիս գրկած, վառ հոգիս,
Դու ցերեկը՝ ոսկի երազ,
Իմ գրկի մեջ, նազելի՛ս:

Հոգեկան մեծ խիզախում էր պետք դարասկզբի դաժան իրականության պայմաններում բացել հոգիների անըջային շքահանդես, ժողովրդի հավերժական արժեքների պանծացման տոնախմբութիւն: Սա Իսահակյանի պոեզիայի ակնառու նվաճումներից մեկն է:

Ժամանակի հետ Իսահակյանի ստեղծագործութեան մեջ սիրո թեման ավելի ու ավելի է առնչվում ասքի ու լեգենդի արտահայտչաձևերին: Թե՛ արձակ և թե՛ չափածո երկերում բանաստեղծը վերացարկում է սերը որպես ճակատագիր և որպես հավերժորեն անհաս երազանք: Հենց այս առեղծվածի մեջ է սիրո միֆական անհասանելիութիւնը: «Ասպետի սերը», «Ահրո վեպը», «Լեյլի և Մեջնուն», «Հավերժական սերը» չափածո լեգենդներում Իսահակյանն ստեղծում է սիրո հավերժութեան հիմնը, Թագմորի հինավուրց ապարանքի ավերակների վկաների հուշը:

Որ աշխարհին պատմեն սերը հաղթապանծ
էլ - Սամանի սերը՝ անանց, հավերժող,
Քարավաններն ու ճամփորդները երկյուղած
Հեռուներից հեռուն եկող - գնացող ...

Իր գրառումներից մեկում Իսահակյանը տալիս է բնորոշումը. «Ինչ է սերը: Ազատվել ինքն իրենից. մարդուն մի բան հարկավոր է աստվածացնել: Աստվածացնել – իրեն զոհ բերել, ստրուկ լինել: Ուստի և ամեն մի սեր կռապաշտութիւն է»¹⁴. Կարելի է ասել, որ իր ամբողջ կյանքում Իսահակյանը դերի եղավ սիրո իր կուռքին և հոգու խաղաղութիւն գտավ նիրվանայում, բացարձակ, դերագուլյան այն ճամարտութեանը, որ նաև երազեց իր վաղ մտորումներում և եզրափակեց «Իմ նիրվանան» խոհերգութեամբ:

14 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, № 94 - 11:

Ես խորհում եմ ներանձնացած
 Լուսթյան մեջ գերանդորր,
 Հոգիս՝ զվարթ, սիրտս՝ հանգիստ
 Զերծ կրքերից բռնավոր:

Եվ ընթացյալ ծիրերից գուբս,
 Անհունի մեջ անուրջի,
 Ես ապրում եմ հավերժաբար
 Առանց վշտի ու տենչի:

Իսահակյանի քնարերգությունը հայոց բանաստեղծության ամենագեղեցիկ ու իմաստալից էջերից է: Պոեզիայի հավերժական մոտիվը վերստին հնչեց Իսահակյանի հանճարի թարմությունը և Քուչակից ու Սայաթ-Նովայից հետո հայոց սիրերգությունը բարձրացրեց համամարզկային հնչեղություն:

* * *

Իսահակյանագիտության մեջ տակավին չի համակարգված գեղարվեստական այն հարստությունը, ինչ ստեղծել է բանաստեղծը հայրենիքի պոետական կերպարի ամբողջական ընդգրկման ուղղությամբ: Ի՞նչ է այն նորը, որ Իսահակյանի պոեզիան բերում է հայրենասիրական մոտիվի պոետական կերպարում: Այստեղ առանձնանում են հատկապես նորարարական երկու հատկանիշ: Եթե XIX դարի ազգային ուժանտիզմը հայրենիքն ընկալում էր որպես դադափար, ապա Իսահակյանն այն փոխաձևում է զգացմունքի կեցություն և հոգևոր արժեքի: Նա հայրենիքն ընկալեց օջախի ծխի հավերժական իմաստությունը, ծանոթ արահետների կարոտի փրկիստոփայությունը, Արարատի, Մանթաշի և Ալադյազի ճերմակ գագաթների արևափայլ լույսով, գաշտերի, արոտների, խաղաղ իրիկուններին հանգչող մաքրությունը: Նման հայացքը բնավ չի հանգում պատմական հայրենիքի ժխտմանը, այլ մի նոր հայրենիքի հայտնություն, ուր հավերժության խորհուրդն են հուշում ժողովրդական ավանգույթներով, բարքերով, կենցաղով մաքրագործված կյանքի առասպելները: Այս հանգամանքը պետք է գիտակցել փրկիստոփայական իր նշանակությունը, ի հակադրություն նրանց, ովքեր փորձում են ստվերագրիծ նշմարել Իսահակյանի քաղաքացիական կերպարի վրա: «Կյանքի ու մահվան կռվի մեջ բռնված ժողովրդին, — գրել է Իսահակյանը, — հայ գրականությունն էր, որ ոգի էր ներչնչում, քաջալերում գիմազրելու, տոկալու, պահելու ազգային անաղարտությունը և ինքնուրույնությունը, պաշտպանելու իր իդեալները ... Հայ ժողովրդի պայքարը հանուն իր ոգու, հայրենիքի և կուլտուրայի ելավ իր գրականության մշտական պաթոսը, որ թուր - Կայծակի պես անցավ իր բոլոր ստեղծագործությունների միջով, բոլոր ժամանակների միջով»¹⁵: Այս

15 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 5, Երևան, 1977, էջ 290:

իմաստով Իսահակյանը Հայ գրականության բնորոշ գիծն է համարել Հայրենասիրությունը և հումանիզմը:

«Մեծ մարդու մտքերին հետևելը ամենահետաքրքրաշարժ գիտությունն է» .- ասել է Պուշկինը: Այս խորհրդով իսկապես Իսահակյանի ասույթները և քնարական երգերը տալիս են Հայրենասիրության գիտություն մի ճշմարիտ ուսուցարան: Հենց սկզբից Հայրենիքի սլաոկերը Իսահակյանի պոետական փորձերում հայտնվեց որպես ճակատագիր, որ կրեց նա իր ամբողջ կյանքի ընթացքում: «Այնքան խորն էր ինձ վրա Հայ երգի ու ճարտարապետության ազդեցությունը, - հետագայում գրել է բանաստեղծը, - որ ուր էլ գնայի ես, Հայաստանն էի կրում իմ սրտում: Նեպոլեոնը ես լսեցի իտալական ժողովրդական երգեր, բայց ականջիս հնչում էին իմ հեռավոր Հայրենիքի երգերը: Նայելով Աթենքի սքանչելի կոթողներին, ես տեսնում էի միայն գեղեցիկ Անի»¹⁶:

Հայրենիքի պատկերի կազմավորման նախնական ղգացողությունները ձևավորվել են Իսահակյանների գերդաստանում, ուր մշտապես արծարծվել է հատկապես այն հավար, թե Հայրենիքը ավանդապահ հողն է, որ մեր պապերը ծնվել են այդ հողից և խառնվել այդ հողին, որ «Հայրենիքը մեր նախնիքն են, մեր ծնողներն են, մենք ենք հող դարձած», գոթախոտ է նա, ով մեռնում է օտար հողում և չի խառնվում ծնողների հողին: Ահա այս մտապատկերն է մշտապես ուղեկցել Իսահակյանին՝ Հայրենական իր խոհերում: Եվ այսպես, յուրացնելով XIX դարի Հայ Հայրենասիրական պոեզիայի ավանդները (Պատկանյան, Ալիշան, Պեչիկթաշլյան, Շահազիզ, Հովհաննիսյան), Իսահակյանն ստեղծում է Հայրենիքի իր պոեզիան, ճիշտ կլինի ասել, Հայրենիքի ճակատագրի մեջ բեկում է իր ճակատագիրը, իր հոգու բոլոր արժեքները՝ սերը, կարոտը, երջանկությունն ու թախիծը չափում Հայրենիքի գաղափարով¹⁷: Արժե հատկապես նշել Աբովյանի և Րաֆֆու Հայրենասեր հերոսների ներգործությունը բանաստեղծի պատանեկան տարիների Հայրենասիրական խոհերում: Հատկանշական է, որ տակավին պատանի Իսահակյանը խորապես վերապրում է Րաֆֆու մահվան ազգային վիշտը և գրում «Նվեր Րաֆֆու Հիշատակին» ոտանավորը, որը կարելի է համարել նրա ազգային - Հայրենասիրական տրամադրությունների արթնացման նախերգանքը:

Իսահակյանը ամենախորին տազնապաներով վերապրեց 90-ական թվականների Հայոց ջարդերը Արևմտահայաստանում: Նրան ցավ էր պատճառում ոչ միայն մարդկության անտարբերությունը տառապանքի մատնված մի ժողովրդի նկատմամբ, այլև եվրոպական պետությունների լկտի վերաբերմունքը թուրքական խժոժությունների հանդեպ: «Գազան, գազան մարդկություն ... իսկ եվրոպան ուրախանում է. նա իր շահերի օւլուտն է իսկույն տեսնում այդտեղ ... ծափահարում է տաճիկին ...», - գրում է 19-ամյա Իսահակյանը¹⁸: Արևմտահայ իրականության աղետները, ինքնապաշտպանության կոչերը ձևավորեցին ֆիդայական շարժումը, վրիժառուների, կամավորական խմբերի Հայրենասիրական ղգացմունքներն

¹⁶ Նույն տեղում, էջ 196:

¹⁷ Հանգամանորեն տե՛ս Ա Վ ա գ Ի ս ա չ ա տ ը յ ա ն. Ավետիք Իսահակյանի Հայրենասիրական պոեզիան. Երևան, 1987, էջ 3-283:

¹⁸ Ա Վ ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 86:

ուղղվեցին ազգային-ազատագրական պայքարի, ձևավորվեցին Արմենական, Հնչակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունները: Իսահակյանը համակրանք էր տածում ազգային հեղափոխական գաղափարի հանդեպ, նույնիսկ ինքն էր նվիրվում ազատարարների բանակին, փորձում դառնալ գերմարդ, հերոս, նվիրյալ, ծրագրում էր գրելու մի «օրիգինալ դիրք», որի հերոսները պետք է լինեին Քյոո Օղլին, Դյոգչեցի Ղազարը, Չոփուռի տղերքը, Դավիթն ու Մհերը: Մի այլ գրառման մեջ նա այդ հերոսների շարքում հիշատակում է նաև Վահագնի, Տորք-Անգեղի, Գայլ Վահանի, Աշոտ Երկաթի, Դավիթ Բեկի, Աղասու անունները, ապա նաև «նոր հերոսներին»՝ Աղբյուր Սերոբին, Գևորգ Չառչին, Անդրանիկին և ուրիշներին¹⁹: Նա դիմում է առասպելին, բալլադին, հեքիաթին և այլաբանական այլ ձևերի՝ ստեղծելու ժողովրդական հերոսությունը մարմնավորող դյուցազունների կերպարներ: Այս տեսակետից բնորոշ են «Իգիթ Սարգար» գրույցը և «Մասսա Մանուկ» վիպերգը: Այսպես, Իսահակյանը օտար երկնքի տակ, մենակ, պանդուխտ, վտարանդի՝ իր հոգում փայփայեց Հայրենիքի սերը, Հայաստան աշխարհը՝ որպես հավատամք և ճակատագիր:

* * *

Իսահակյանի գեղարվեստական մտածողության էական առանձնահատկություններից մեկն էլ պետք է համարել առասպելաչափական պատկերավորությունը: Դեռ վաղ տարիների նրա հուշերում կարելի է նկատել հեթանոսական-ասպետական ժամանակների, ազատասիրական ոգու մեծարանքը: «Հին աշխարհ, խորհրդավոր աշխարհ, խորը և անքննելի աշխարհի մարդիկ, - գրել է Իսահակյանը 1896 թվականին: Դուք մեզ պես թույլ, վախկոտ, տուփոտ, քնքուշ չէիք, դուք քաջ էիք, ամուր, ահեղ, հսկա՝ ... Զարթնեցե՛ք դուք ձեր գերեզմանից, թող ձեր ուժը փռվի մեր վրա, ձեր խորհրդավորությունն ու ձգտումները, ձեր կրակն ու բոցը թող մեզ տիրի, տաքացնե՛ ... Հին աշխարհ, փարթամ, հսկա, ահուելի աշխարհ ...»²⁰:

Հեթանոսական այս պոռթկումները, ուժի, հզորության ու վայելչության փառաբանումները բանաստեղծի հոգու արձագանքներն էին, որոնք ժամանակ հետո հայ պոեզիայում պիտի ձևավորվեին որպես «հեթանոսական հոսանք»: Ուժի, Զորության, Քաջության, Կրակի պաշտամունքը հնչում է որպես նախատինք նոր ժամանակների քաղքենիությունն ու տափակ ինքնագոհության հանգեպ:

Այս մտորումներից է ծագել «Մասսա Մանուկ» վիպերգի մտահղացումը, որ առաջին տարբերակով գրվել է 1895-1898 թվականներին: Վիպերգը պետք է լիներ հայ ազգային - ազատագրական շարժման էպոսը, Սասունի դյուցազունների շարքը լրացնելու նոր հերոսներով: Իր հուշերում Դ. Դեմիրճյանը գրում էր, որ «Դա մի շքեղ բան էր և կարող եմ վկայել, որ

19 Նույն տեղում, էջ 235:

20 Նույն տեղում, էջ 231:

ինչքան հիշում եմ և չեմ սխալվում, Ավետիքի պոեզիայի մեջ անգամ արտակարգ ու ինքնատիպ երկ էր»²¹:

Իրավամբ «Մասսա մանուկ» վիպերգը կարելի է համարել հայոց դյուցազներգության սքանչելի էջերից մեկը, ուր փառաբանվում է հերոսությունը, աղատությունը, աշխատանքը, ստեղծագործ ոգին: Հիանալի են օգտագործված «Սասունցի Դավիթ» էպոսի ավանդույթները, գտնված է էպոսի բնույթի յուրահատուկ ոճավորումը: Գրավիչ է բառ-պատկերի կոլորիտը՝ տոհմիկ ու հարազատ գույները խաղը, որ վիպերգի նախերգանքում ավետում է դուստանի խոսքը.

– Բարո՛վ ձեզի, հայ ախարտի՛ք,
Հանց լեռ ու ժեռ՝ գուք քովեքով,
Բարո՛վ ձեզի, հայ քուրիկնե՛ր,
Հանց գարգ ու վարգ՝ գուք քովեքով:

Այս մուտքից էլ սկիզբ է առնում մերթ գուսանի, մերթ ժողովրդական ասացողի, մերթ բանաստեղծի իրական ու առասպելական, տեսիլային ու երազային խոսքը, որն իր մեջ առնում է հայոց արյունոտ անցյալի, ողբերգական ներկայի և ապագայի պատկերը: Գուսանը պատմում է Գե-Սուլթանի ճիրաններում առապող աշխարհի ավերակման մասին, ապա նկարագրում Դե-Սուլթանին խոցելու Մասսա Մանուկի սխրանքը և պանծացնում «հայոց ազգի փառքը» ...:

Վիպասքի սյուժեն ներկայացնում է գրվագներ Մասսա Մանուկի քաջագործությունների մասին, որոնք տողանցվում են քնարական հատվածներով՝ հայրենի բնաշխարհի, ռազմի կոչերի, հերոսների գովքը երգող հայ աղջիկների սիրո և նվիրումի մաղթանքներով: Գեղարվեստական մի իսկական հայտնություն է Մասսա Մանուկի կերպարը: Իսահակյանն իր հերոսին օժտում է արտաքին ու ներքին բարեմասնություններով, գովերգում նրա աչքունքը, պայծառ ժպիտը, դեմքը, որին նախանձում են երկինքը, արևը և արշալույսը: Վիպերգի հերոսի ծնունդը, մանկությունն ու հասունացումը Իսահակյանը ներկայացնում է մեր ազգային էպոսի գլխավոր հերոսի վարքով ու նմանություններով և կրում է նրա բնորոշ գծերը՝ վեհանձնություն, կամք ու արիություն, բուռն ատելություն բռնավոր սուլթանի հանդեպ: Բնորոշ է, որ ժողովուրդը իր հերոսին է հանձնում Սասնա Ծռերի հրաշագործ զենքը՝ Հրեղեն ձին, Թուր - Հավուսին և Թուր - Կեծակին: Վիպերգն ավարտվում է Մասսա Մանուկի հաղթանակով և Դե-Սուլթանի պարտությունով: Ժողովուրդը փառաբանում է նորօրյա հերոսների սխրանքը՝ Անդրանիկը, Աղբյուր Սերոբը, Վարդանը, Գևորգ Չաուչը և հայկական հերոսապատումի այլ քաջագույները: Այսպիսով, երկը ստանում է դադափարական նպատակասլաց վերջաբան . պարտվում է հազար տարվա հրեշ-թշնամին, և Մանուկի շեփորումով վերադառնում են հաղթանակած քաջորդիները, քանգում Դե-Սուլթանի բերքը և ձեռնամուխ լինում դեզղկական, խաղաղ ապրելակերպի՝ ցանում «ցորենը ազատություն, իրավունքի, արդարության և աշխատանքի»:

21 Գ. Դ ե մ ի ր 6 յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 8, Երևան, 1963, էջ 201:

Իսահակյանը «Մասսա Մանուկ» վիպերգը կերտել է Հայոց Հին գուսանների ու բանասացների հանգով, ներարկել այն տոհմիկ գծերի հմայիչ ու իմաստալից երանգները, որոնք արժեքավորում են նրա տեղը Հայ պոեմի գասական նմուշների շարքում:

Իսահակյանի պոեզիայի ամենագեղեցիկ հայտնություններից է «Հայդուկի երգեր» շարքը, գեղեցիկ իբրև մտահղացում և որպես ազգային-ազատագրական բանաստեղծության եզակի նմուշ, թե՛ իր ձևով և թե՛ բովանդակությամբ: Այդ պոեզիայի հերոսը Ֆիդային է, Հայ հեղափոխականը, որ երգվել էր չքնել, չամուսնանալ, մոռանալ տան և օջախի վայելքը ու նահատակվել, քանի դեռ դերի է իր Հայրենիքը: Բանաստեղծությունների այդ շարքը Հայ-Գուսան ստորագրությամբ տպագրվել է հիմնականում «Դրոշակ» թերթում 1899-1902 թվականներին²²: Հայ Ֆիդային ժամանակին երգում էր իրեն հասցեագրված Իսահակյանի երգերը, որոնք ժողովրդական պարզ ու զուլալ մեղեդիներով արտահայտում էին Հայ քաղորդու զդացումները՝ քայլերգային, ռիթմիկ, խորիստ ու առնական շեշտերի հետ համահնչելով հայրենական վշտի էլեգիական, հուզաշաղախ նվաղները: Հայրենիքի ու մոր սուրբ սիրով հերոսի կերպարն է պատկերվում «Ազիզ մերիկ քեզի թողի» բանաստեղծության մեջ, որն իր անձնագոհ նվիրումն է արտահայտում «դուժան սարեր, դարդուլ սրտեր» ունեցող հայրենիքին, «առյուծի սլես Հայ ախպրտանքին» ուղղելու թշնամուն հաղթելու ուղղմի կոչը: Ապա հաջորդում են «Հազար բարով հպարտ սարեր», «Ինձ տեղ տվեք Սիփան սարեր», «Ձեր շարքերի մեջ կտրիճ ընկերներ», «Սալնո ձորերում, կովի ձորերում», «Ճամբես արունի հետք թողեր, կերթա», «Իրիկունն եկավ տնետուն մտավ» և այլ բանաստեղծություններ, որոնցից յուրաքանչյուրը ազատության մի հիմն է, ազատության երգ և նահատակության երգում:

Ազատություն՛ն, ազատություն՛ն,
 Կյանքի արև՛ ազատություն,
 Մասիսից ազա՛տ, արծրվից ազա՛տ,
 Աշխարհի տե՛ր ազատություն
 Արծրվի պես բարձր ես թո՛նում,
 Մասսից բարձր ազատություն,
 Դո՛ւ կյանքից վե՛ր, դու լու՛յս - արև,
 Ազատություն՛ն, ազատություն՛ն ...

Մի կողմից մոռալ հոռետեսություն և անհատապաշտական փախուստ իրականությունից դեպի անապատային ոչնչություն, մյուս կողմից գերմարդու, հերոսի պաշտամունք և ազատության շեփորում՝ հանուն իր բռնադատված հայրենիքի և բիրլիական ժողովրդի զորավոր երազանքների իրականացման:

²² Տե՛ս Ա վ ա դ ի ն ա չ ա տ ը յ ա ն. Ազատագրական պայքարը Ավ. Իսահակյանի քնարերգության մեջ. - «Լրաբեր Հասարակական գիտությունների», 1985, № 9, էջ 30-39:

Հերոսների, հոգու արիստոկրատների կառավարման վերաբերյալ մտորումները արտահայտում են Իսահակյանի հերոսապաշտության իգեալը, որի մասին այնքան շատ է գրել նա իր «Հիշատակարանում»: Դեռևս 1895-ին բանաստեղծը գտնում էր, որ «հենին մի ողջ ազգ է, մի ազգի գլուխն է»²³, և նա պետք է ղեկավարի ազգը գեպի մի որոշ նպատակ: «Մեր գարու նպատակը հեղափոխությունն է — արմատական ու հիմքով»²⁴ — ասում է Իսահակյանը և նպատակ գնում լավ ուսումնասիրել հայոց պատմությունը, գրականությունը և ժողովրդին, գառնալու համար ազգային բանաստեղծ, մարգարե, առաքյալ: Բանաստեղծ-մարգարեն կարծես լսում է ազատության զանգի ղողանջը տիեզերական հեռուներից: Տեսլացած Տիեզերքը, Բնությունը և Մարգը հավերժության ուղևորներ են՝ իրար հետ կապված և միմյանց հաղորդակից: «Ես ասում եմ, — գրում է Իսահակյանը, — և ասել եմ միշտ, որ տիեզերքը մի մեծ զանգ է, ղողանջում է: Բնությունը զանգ է, որ ղողանջում է բնության խոր, լայն երգերը ... Մարգն էլ է զանգ, մարգն էլ է ոգի-զանգ . կամ մարգն է այդ տիեզերական զանգի լեզուն ... Վերջապես Տիեզերական ղանգ կա, Ոգի-զանգ կա ... Պետք է հասկանալ. կ'ա և քարե-զանգ, ամբոխ-զանգ»²⁵:

Հենց այս գրառման օրերին (1899, օգոստոս) գրած, բայց տակավին անտիպ «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծության մեջ Իսահակյանն այսպես է ներկայացնում իր կոչումը.

Ես մի նոր զանգ եմ, և՛ վեհ, և՛ վսեմ,
Եվ անհուն խորքից մեծ տիեզերքի
Կախված եմ ահա ամբոխի վրա.
Եվ ղողանջում եմ նոր ու խոր երգեր —
Վըսեմ պատգամներ հոգովս ոգված
Եվ սուրբ կրտակներ, հրպարտ քարոզներ:

Սա նախերգանքն է «Տիեզերական զանգ» բանաստեղծության, որտեղ Իսահակյանը կարծես գգում է տիեզերական մեծ լուռության մեջ ղողանջող հավերժության, ճշարտության և գեղեցկության երգը՝ «Տիեզերքը ողջ մի մեծ, անհուն զանգ, Եվ հոգիս — նրա լեզվակը վսեմ»: Այս գաղափարը մի ամբողջ մոտիվ է գծում Իսահակյանի պոեզիայում («Թանձ կուտամ թևերս և կսավառնեմ», «Լսում եմ ղողանջը տիեզերական», «Անհուն վրեժի և ատելության» և այլն), ազատության և իրավունքի հուրը վառում է ընչազուրկների հոգում՝ բարձրացնելու պայքարի ու սուրբ ազատության գրոշը և ավետելու «ոգու հարության լույսը»: Իսահակյանը փիլիսոփայական իմաստ է տալիս Ազատությանը՝ այն գիտելով տիեզերական կամքի հավերժական ձգտում. «Վեհապանծ, բարձրագահ և տիեզերական ոգիներից է բխում ազատությունը, որը լեռնաբարձունքներից շառաչող հզոր հեղևի պես, ահեղագոչ շառաչում է՝ փչրելով սառած, անկյանք ժտուրեր. կապանքներ ու օրենքներ փչրող ազատության հեղեղը,

23 Ա. վ. Ի. ս. հ. ա. կ. յ. ա. ն. Հիշատակարան, էջ 178:

24 Նույն տեղում, էջ 189-190:

25 Նույն տեղում, էջ 263 - 264:

խորտակելով գրանիտե և բրոնզե գահերը՝ ջրվեժի պես ընկնում է դաշտի վրա, ցուլացնելով իր մեջ արևի շքեղությունը ... ուր ամենքը երազում են երկինք սլանալ, դեպի տիեզերական անսահման, անեզր ազատությունը ...»²⁶.

Եկավ հեղափոխության տեղատվության շրջանը և բերեց հիասթափություն, հուսախաբություն և անկումային տրամադրություններ: Բայց նա այնքան մեծ տպավորություն է թողել Իսահակյան-բանաստեղծի վրա, այնքան ոգևորություն ու աղատաբաղձ ձգտումներ է բերել նրան, որ ռեակցիայի մղձավանջային տարիներին անգամ նա վերստին հնչեցնում է մարգու աղատ ու ծանր վիճակից գուրս գալու, խրոխտ ու ազատ լեռնագագաթներում ապրելու տենչանքները: «Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների...» բանաստեղծությունը ներկայացնում է ստրուկ աշխարհում՝ մարգականց օրենքով շղթայված, գերի սրտի պրոմեթևսյան տառապանքն ու հոգու ճիչերը, Մասսի առհեղի, «վսեմ ու հզոր» լեռնագագաթում «ըմբոստ և վիրավոր» սիրտը թաղելու անհուն տենչանքը: Բանաստեղծի համոզմամբ արդի կացության մեջ «բոլոր դավերի միակ բաժինը» հեղափոխական կենսական անհրաժեշտությունն է:

* * *

1908 թ. Իսահակյանը հայ ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու համար երկրորդ անգամ ձերբակալվում է և բանտարկվում Թիֆլիսի Մետեխի բանտում: Աղատվում է երաշխավորությունաբ, սակայն ոստիկանական հետապնդումները, մեղադրանքները և հոգեկան տազնապաները շարունակվում են՝ ալեկոծելով բանաստեղծի ներաշխարհը թախծի, հուսահատության ու հեռացումի ցավադին վերապրումներով: Ի վերջո, ոստիկանական հալածանքներից ազատվելու համար Իսահակյանը թողնում է հայրենիքը և մեկնում արտասահման:

Բանաստեղծները ժամանակից շուտ են զգում ժողովրդի բախտն ու ճակատագիրը, վերահաս վտանգն ու արհավիրքը: Նրանց անպարփակ հոգու քուրայում այրվում, թրծվում և կոփվում են աշխարհի ու տիեզերքի բյուրավոր հարցեր, խնդիրներ, առեղծվածներ: Բյուրավոր այս հարցերի բեռով Իսահակյանը հայտնվեց օտար երկնքի տակ: «Մի անհուն ուղի լուռ տանում» էր նրան չգիտես ուր, և «համայն աշխարհի» բախտը սզացող բանաստեղծը տիեզերական թախծին խառնում էր իր փայփայած երազների փոշիացումը, հայրենի եզերքի ծանոթ արահետների մորմոքը: Դառն է հեռացումի վիշտը, բայց կայուն է իր կոչման հավատը. «Ես զրոզ եմ, և զրոզ էլ կմնամ, թեկուզ սոված մեռնեմ ... Կերթամ, կերթամ, և կսպասեմ մինչև աշխարքը փոխվի ... Ինձ մորթելով թողի, հեռացա. անիծյալ լինի կյանքը, աշխարքը, մարդիկ»²⁷:

Եթե հայրենիքում զրած բանաստեղծությունները հնչում են զայրալից, ցասկոտ ու ատելության կիզակետով, ապա հայրենիքից հեռու, օտա-

26 Նույն տեղում, էջ 299 :

27 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 6, էջ 108-109:

րության մեջ գտնվող բանաստեղծի քնարը հնչում է կարոտի, մորմոքի, երազների, տեսիլների ջերմ ու սրտառուչ մեղմությամբ.

Հայրենի գետի ղմրուխտ ավերին
Մեր հին տնակն է կթել մենավոր,
Ա՛խ, ես հեռավոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր:
Շաչում է ահեղ՝ իմ գլխի վրա
Աչնան ցուրտ քամին այս մութ գիշերին ...
Վառվում է արդյոք օջախս հիմա
Հայրենի գետի ղմրուխտ ավերին ...

Հեռավորության վրա հայրենիքի ճակատագիրը բանաստեղծի համար դառնում է հոգու մշտական խոհերի վկան, անդրադարձնելով նրա պատմության և կրած արհավիրքների մորմոքը: «Ողբում եմ դառն վիճակդ տխուր, ո՞վ հայ ժողովուրդ, տանջալից աղբյուր: Եվ ո՞վ կուտա ինձ արցունք ծովերով՝ լալու երկիրդ արյուն ու թափուր ... Հի՛ն - հի՛ն դարերից, խավար դարերից, դաժան ու դժվար ճանապարհներով՝ քո հոգու, մտքի, ինքնուրույնության և ազատության վեհ գործի համար դու մաքառեցիր՝ միշտ մագլցելով դեպի անհունը, գեպի լույսն անմահ ... Ավա՛ղ, խավարը և չարը ... խորտակեցին քեզ, և նվիրական խոր վերքը սրտից և մարտիրոսի պսակը ճակտից բնկար դու անհաղթ, բաղմատանջ վկա, կատարելության մեծ շավղի վրա ...»: Ողբերգական, թանձր ու գիշերագեմ այս պատկերներին գալիս են փոխարինելու հույսի ու լույսի ճառագայթները, ապրելու, գոյատևելու և հավերժելու ղողանջները՝ «Դու պետք է ապրես, դու կուգես ապրել»: Այստեղ պետք է վնտրել Իսահակյանի ստեղծագործության գաղափարական միտումները՝ հայ ժողովրդի արյան շառագույնից ծնված ողբերգական ճիշերը և լուսավոր գալիքի նկատմամբ ունեցած հույսերն ու երազները: Տարագիր կյանքի ոգիսականը հենց սկզբից իր վրա կրեց հայրենիքի ու նրա ժողովրդի նկատմամբ ունեցած բանաստեղծի հավերժ սրբազան սիրո այնպիսի լիցքավորում, որ նա որտեղ էլ եղավ, որքան էլ տեսավ անկրկնելի գեղեցկություններ ու արվեստի հիասքանչ կոթողներ, սակայն մնաց իր հայրենիքի ու տառապած ժողովրդի հետ, հայրենի ղմրուխտ ջրերի ու պաղպաղուն աղբյուրների հետ:

Ուշագրավ է Իսահակյանի հետաքրքրությունը հայ դատի վերաբերյալ. դիտելով դիվանագիտական այն խաղերի խաբուսիկ լինելը, որ եվրոպական մեծ տերությունները հանգես են բերում Հայկական հարցի լուծմանը: Առաջին աշխարհամարտի արհավիրքներում Թուրքիան սանձադեռնում է հայոց ցեղասպանությունը: Դժվար է երևակայել հոգեկան տառապանքի այն ցնցումները, որ ունեցավ բանաստեղծը հայրենական աղետի հանդեպ: «Իմ հայրենիք, - գրում է Իսահակյանը «Հիշատակարանում», - ավեր, արյուն, նախճիր, որբեր, հրգեհ, ավար ... Սարսափը համակել է ինձ, լուռություն, վախից չեմ կարող հետ նայել ... Ինձ թվում է, թե իմ աջն ու ձախը, հետևն ու առաջս տարածվում են գերեզմաններ, եղբայրական գերեզմանների ծով, անթաղ գիակներ, բյուրավոր, բյուրավոր և նորից բյուր-

րավորներ. մեջքիս ետև սեղմում են ինձ գերեզմանները – իմ անգին ընկերների – Սիամանթո, Վարուժան, Խաժակ... Դուք կանչում եք ինձ, իմ ընկերներ, իմ մորթված, խողխողված քույրեր, եղբայրներ, մանուկներ ... գալիս եմ, գալիս եմ»²⁸: Թանձրանում են հոռետեսության գույները բանաստեղծի աշխարհայացքում, նգովքի խոսքեր հղում աստծուն; մարդկությանը, Եվրոպայի քաղաքակրթությանը, «ստորության և եղեռնի դրոշակակիր պետությունների», որոնք կեղծ, գավոզ - խաբող դրոշներով քողարկված հռոտում են փոքր, անօգնական ազգերին: «Հայոց բոլոր արյունի մեղքը եվրոպացիների խղճի վրա է ծանրացած», – ասում է Իսահակյանը, և ապա՝ «Մարգր կատարելագործված գազան է, ոչինչ ավելի և ոչինչ պակաս, անհնար է հավատալ մարգուն, մորալին, բարոյախոսության, խղճի, խղճմտանքի, ազնվության, եղբայրության, մարդկության, մարդասիրության»: Եվ այս ողբերգությունը ավելի է սրում բանաստեղծի սերն ու խանդաղատանքը հայրենիքի հանդեպ, սրտի զեղումները հասցնելով սենտիմենտալ աղոթքի. «Իմ սուրբ ժողովուրդ, ես սիրում եմ, ես պաշտում եմ քո խավար խրճիթները, քո արտասովոր հացը և քո արյունաներկ արորը: Ես պաշտում եմ քո փլատակ վանքի ամեն մի փշրված քանդակը և համբուրում եմ նրանց սրբազան մամուռը: Դու չես մեռել, դու անմահ ես, դու ինքդ անմահությունն ես և հավերժական գաղափարը»²⁹:

1917-ին ժնևում Իսահակյանը դրում է «Մեր նախահայրերը» ստեղծագործությունը, որը բալլադային, հերոսական լուծումներով մի ինքնատիպ հիմն է հայ ժողովրդի նախնիների քաջագործությունների մասին: Ուրարտական Ասրդուրիս արքայի և Նաիրական արքաների հերոսական գործերից մի դրվագի նկարագրությունը վերաճում, ընդհանրացվում է Հայոց պատմության փիլիսոփայության: Իսահակյանի այդ տարիների արխիվային թղթերում կան տասնյակ անավարտ ու անհայտ բանաստեղծություններ, գրառումներ, նամակներ և օրագրություններ, որոնք դրված են ցասումով ու վրեժի պոռթկումով և ատելության բուռն կրքով հայրենիքի թշնամիների հանդեպ: Արևմտահայության տեղահանությունը, կոտորածը, եղեռնը միայն քաղաքականության խնդիր չէին: Դա մարդկայնության կորստի, բարոյական արժեքների փլուզման և կործանման սարսափելի աղետ էր, որ տակնուվրա էր արել Իսահակյանի հոգեկան աշխարհը, զրկել նրան իր փայփայած երազներից: Եվ այն խորհրդանշական պատկերները, որ նրա պոեզիայում կյանքի ու զեղեցկության արձագանքներ էին՝ աստղերը, ծաղկունքն ու աղբյուրների կարկաչը, այժմ ատելի են ու խորթ:

Ահա նորեն գարունն եկավ.

Օ՛, կտրեցեք, օ՛, կտրեցեք

Լեզուները թռչունների,

Որ չհանդգնեն երգել անհազ

Երգերն իրենց տարփանքների ...

28 Ա. Կ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 314 - 315:

29 Նույն տեղում, էջ 323:

Ռուսաստանում կատարվող իրադարձությունները հուլիսի ու հավատի սպասումներ են ծնում Իսահակյանի հոգում: Ներչնչված «ռուսական հեղափոխության հաղթանակով» և նրա հետ կապելով հայկական հողերի և հայ ժողովրդի ազատագրումը և ապագա սերունդներին վերապահելով «Հայաստանը Հայաստան դարձնելու միսիան», Իսահակյանը հայացքն ուղղում է վերադարձի արահետներին:

* * *

Սերը Իսահակյանի պոեզիայի ոգին է: Որպես բանաստեղծական պատկեր այն ունի երեք խորհրդանիշ՝ Շուշիկը, Հայրենիքը, Մայրը: Մենք անդրադարձանք սիրո և հայրենասիրության մոտիվներին: Համաշխարհային քնարերգության մեջ երևի բացառիկ արժեք ունի նաև մայրական սիրո մոտիվը Իսահակյանի պոեզիայում: Հատկանշական է հայրենիքի և մոր սիրո նույնացումը: «Ահավոր ուժ է Հայրենիքի սերը, — ասում է բանաստեղծը, — Մոր նման՝ միշտ սիրում ես, միշտ կարոտը թարմ է և միշտ անհագուրդ ... Մոր և հայրենիքի սեր — հավիտյան նոր, հավիտյան թարմ, կուսական, անձանձիր»³⁰: Մայրական սերն ավելի կարոտակեզ ու սրտամորմոք է հնչում հեռավորության վրա, պանդխտության մեջ, ուր սերը դառնում է տեսիլք ու երազ: Այդ բանաստեղծություններն զգացմունքի անմիջականությունը ու ջերմությունը դարձել են երգ և մշտապես մտել հայ ժողովրդական երգարան: Ահա Դրեզդենում գրած «Մայրիկիս» հանրաճանաչ երգը.

... Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրի՛կ ջան,
Երնե՛կ, երնե՛կ, երազ լինեմ,
Թըռնիմ, մոտրգ, մայրի՛կ ջան:

Երբ քունգ դա, լուռ գիշերով
Հոգիդ դըրկեմ, համբույր տամ,
Սըրտիդ կրպնիմ վառ կարոտով,
Հա՛մ ու խընդա՛մ, մայրի՛կ ջան ...

1903-ին Բաքվում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն Իսահակյանը նվիրել է մորը՝ հետևյալ ընծայադրով. «Անգին մորս՝ Ալմաստ Իսահակյանին նվիրում եմ բանաստեղծություններս»: Եվ հենց սկզբում բերված է «Գուցե իմ հեծեծանք, հառաչանք և մրմունջ» բանաստեղծությունը, որը լի է մոր նկատմամբ ունեցած սիրով, ակնածանքով և սրբության խոստովանությամբ: Միայն մորն է հայտնի որդու վիրավոր, խոցված սրտի տառապանքը, միայն մայրն է խորապես զգում որդու տիեզերական վիշաը՝ և միայն նա է աշխարհում ամոքում կյանքի հարվածներից ստացած որդու վերքերը: Մայրական սերը, որ հաճախ ձուլվել է հայրենական սիրո զգացումներին, մշտապես ուղեկցել է բանաստեղծին: Նա

30 Նույն տեղում, էջ 330:

մշակել է ժողովրդական բանահյուսության ընտիր նմուշներ՝ «Պանդուխտ որդին», «Մայրը», «Մոր սիրտը», «Որդիական սեր», որոնք պատմում են մայրական սիրո հավերժության լեդենդը և մայրական մոտիվի դասական նմուշներ են:

Գրականագիտության մեջ դիտարկվել է, որ XX դարասկզբի հայ գրականության մեջ տեղի է ունենում արժեքների վերագնահատության մի ընդհանուր ձգտում: «Վաղվա գրականության», «Հայ գրականության գալիք օրվա» սլահանջը դեղագիտական ու գաղափարական նոր խնդիրներ է առաջադրում ազգային գրականությանը: Այդ խնդիրների շարքում գլխավորապես շեշտվում է աղբյուրին ոգու նորակերտման գաղափարը: Պետք էր հայտնաբերել հայոց տոհմիկ ոգին, ցեղային մեծությունը, հեթանոսական ժամանակների ուժի, գեղեցկության և սեռի պաշտամունքը, գոյություն ու հաղթանակի ջիղ ներարկել ազգային հոգեբանությանը: Ազգի գոյատևման այս խոհերով էր պաշարված նաև Խաչատրյանը: Այս տեսակետից նշանակալից եղան մտահղացման գեղարվեստական լուծումները «Ալազազի մանիներ» պոեմում և «Սասնա Մհեր» վիպերգում: Ալազազի հովերի ու երփներանգ ծաղիկների հոգեպարար մեղեդիները, ժողովրդածիսային ու հեքիաթային պատումների արձագանքներն ու տոնախմբությունները հնչում են որպես գոյատևման հավերժական արժեքների պանծացում, մեր ժողովրդի հավերժության, կամքի ու կենսափիլիսոփայության հիմներգ: Վարդավառի երգն ու պարը, բնության ազատ, անկաշկանդ գրկում թևածող կանչերն ու ղողանջները մեզ տանում են հեթանոսական ժամանակները, երբ պաշտվում էին Կեղեցիկը, Սերը, Քաջությունը:

Ազգային ոգու հայտնության մղումով է, որ Խաչատրյանը դիմեց հայկական էպոսին՝ նախընտրելով նրա թերևս ամենաբարձր և առեղծվածային ճյուղի մշակումը: Մտահղացման շարժառիթներում անշուշտ առկա էին գարասկզբի սոցիալական - ազատագրական շարժումների և հատկապես ռուսական հեղափոխության պատմական հեռանկարների ակնկալումը: Հավանաբար հենց ռուսական հեղափոխության ազդեցությամբ է Խաչատրյանը կատարել հետևյալ գրառումը. «Կորչի՛ն սուլթան ու թագավոր, իսան ու իշխան, կնյազ ու բեկ, աղա, բարոն, վալի, հարուստ ու տեր ... Կեցցե՛ն բանվորն ու գեղջուկը, աշխատավորն ու ստեղծողը, շինարարն ու շինականը, այգեպանն ու մշակը, կեցցե՛ն ազատությունն ու եզրայությունը, իրավունքն ու աշխատանքը, հողն ու արհեստը»³¹:

Խաչատրյանը Մհերի կերպարի մեջ հետաքրքրությունը կապում էր սոցիալական անարդարության վերացման խնդրի հետ: «Եթե «Մհերը» գրեմ, - ասում է Խաչատրյանը, - հիմնականում կետը այդ կռիվն է - ռամկացումը»: Հետաքրքրությունը Մհերի կերպարի հանդեպ ծագել է գեռուս 90-ական թվականներին: «Մասսա Մանուկ» վիպերգի մտահղացման առիթով Խաչատրյանն ասում է, թե իր հերոսների՝ Քյոոզլու, Գյոզեցի Ղազարի, Չոփուռի տղոց և այլոց հետ Դավիթ-Մհերի սերը պետք է լինի ազատությունը, վրեժը և եթե այդ քաջագունների ուժերը չբավարարեն, նրանք կդիմեն «հայի վրեժը մարմնավորող» Մհերին: Առհասարակ Խաչատրյանը շատ է անդրադարձել Մհերի կերպարին, փորձել բնութագրել

31 ԳԱԹ, Ավ. Խաչատրյանի ֆոնդ, №11-780, էջ 9-10:

Նրա աւելցածը: Ուշագրավ է նրա մի դիտարկումը քրիստոնեություն ու հեթանոսություն վերաբերյալ, թե ժողովուրդը այդ կերպարների միջոցով ասում է, որ քրիստոնեության ժամանակ ինքը կորցրեց իր կյանքը, երջանկությունը, մինչդեռ հեթանոսության ժամանակ (Մհեր) ազատ էր, քաջ և առողջ և Մհերը քարայրից դուրս գալով կսկսի նոր հեթանոս կյանք: Ժողովուրդը Մհերին ուսմկացրել է, որպեսզի նա զգա ուսմկին և իր ուժը օգտագործի ժողովրդին ազատագրելու համար: 1939-ին գրած «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հոդվածում Իսահակյանը խորհմաստ բնութագրական է տալիս Մհերի կերպարին, ասելով, որ «իր անմահ վեպի մեջ ժողովուրդը դրեց իր բովանդակ հոգին՝ անվերջանալի պայքարով ու դառնությունամբ լի իր պատմության փրկիսոփայությունը, իր վտորձը աշխարհի իրենքի մասին, իր դարավոր իմաստությունը, իր նվիրական իդեալները: Եվ կերտելով Մհերի վսեմ, մարգարեական, մեսիական կերպարը, մեր վեպը ազգային շրջանակից ելնելով՝ ընդունում է համամարդկային որակ, և դառնում աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս»³²:

Իսահակյանը վիպերգի սյուժեն կառուցում է Մհերի ծննդի, մանկություն, պատանեկության տարիների արկածների ու բնավորության ձևավորման ընթացքի մեջ, ցույց տալիս կյանքի անարդարություններին ականատես հերոսի սոցիալական գիտակցության ձևավորումը, աշխարհից հալածված Մհերի մեկուսացումը Ադապաքարում: Բայց նա անտարբեր է դրսի աշխարհի նկատմամբ, «հոգին ականջին ու ականջը՝ ուսմկի կանչին» նա կազմ ու պատրաստ սպասում է գալիք օրերի ազատամարտին: Գեղարվեստական թանձր գույներով ու խտացումներով Իսահակյանը «Վերջերգում» ներկայացնում է նոր աշխարհի հիմնադրման այն երազի իրականացած դադափարը, որ անցել է մեր ժողովրդի պատմության ընթացքով՝ էպոսի հերոսների երազների միջով: Հազար ու բյուր ուղիներ կանչելով փոթորկում են Մհերի սիրտն ու հոգին, «Խոյ վրնջաց Ձին հրեղեն, ու ժաժեցին աշխարհն հիմեն ու ճեղքեցին քար ապառաժ, Թուր-Հովանու կայծակից խորտակվեցին քարե կապանքն ու դուռը, և Մհերը ելավ արևաշխարհ, նրա շուրջը «ծով կապեցին» ընչազուրկները:

Ավերեցին աշխարհը չար,
Ու ուսմկություն բերին աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ուսմկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Ժողովուրդն է կերտել իր հերոսական էպոսը: Նրան է իրավունք տրված մշակելու իր վեպը, մինչդեռ հայոց երկու մեծ բանաստեղծները՝ Թումանյանն ու Իսահակյանը այնպես հոգեհարազատ, այնպես ոսկերչական նրբություններով մշակեցին էպոսի ճյուղերը, որ իրենք դարձան ժողովրդական բանաստեղծներ: Դավիթը իր հերոսական ու հայրենասիրական

32 Ա. Կ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 5, էջ 170:

սխրանքով պահեց Սասնա տունը, իսկ Մհերը նրա ապադան տեսավ ազատության ու սոցիալական արգարության ուղիներում:

Խոսելով իր կյանքի նպատակների ու ստեղծագործական ծրագրերի մասին՝ Իսահակյանը վաղ շրջանի իր օրագրում նշել է, որ ինքը լույս պիտի տա արևի պես, կայծակի պես այրվի, պիտի երգի, ապրի բովանդակալից կյանքով, գրի ոչ թե մարդկանց «ղվարձացնելու ու ձանձրույթը փարատելու, այլ տանջելու ու ոգևորելու» համար և իր գիրքը պիտի լինի մի չքնաղ հյուսվածք, որի մեջ իր ձևով պիտի լուծի փիլիսոփայական, տնտեսական, սոցիալական, բարոյական, էսթետիկական, բնագիտական հարցեր ու խնդիրներ:

Փիլիսոփայական խոհը Իսահակյանի պոեզիայի ներքին ձևի բնորոշ հատկանիշն է, իսկ իմաստասիրությունը նրա տաղանդի առանձնահատկությունը: Խոհափիլիսոփայական տարրերով են լիցքավորված Իսահակյանի բանաստեղծությունը, արձակը, օրագրությունը, նամականին, Հեքիաթն ու առակը, որոնք բացահայտում են նրա կապը բնության հետ. «Իմ սիրտը բնության հետ, տիեզերքի մշուշի հետ, հեռավոր աստղերի հետ է ապրում, նրանց սիրով, նրանց ցավով ցավում»: «Ապրել-գործել հօգուտ հասարակության, — ասում է Իսահակյանը, — ահա իմ սկզբունքը»: Բայց թե ինչու է ապրում հասարակությունը և ո՞րն է մարդկության նպատակը՝ բարդ հարցեր էին, որոնց պատասխանը նա ձգտում է գտնել դիտությունների ու իմաստասիրության մեջ, որոնց տիրապետելը գրեթե անհնարին է: Այս ձգտումը, Ֆաուստյան այս մորմոքը՝ մարդու ամենագետ լինելու կարողության մասին, Իսահակյանի հայացքն ուղղում է դեպի համաշխարհային գիտության և փիլիսոփայության, գրականության և արվեստի աշխարհը, կարդում երևելի իմաստասերների աշխատությունները: Ու թեև հաղորդակից եղավ հարափոփոխ կյանքի անցուղարձերին, սակայն մշտապես մնաց անհազ ու կարոտաբաղձ սպասումների և դրանով ավարտեց իր վերջին տիեզերական խոհը.

Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել
 Եվ լինել աստված տիեզերաչեն,
 Ամենակարող, ամենահզոր
 Եվ ամենագետ ...

Իսահակյանը տիեզերքը պարփակում էր մարդու էության մեջ: Նրա բնութագրումներով մարդու հոգին ձգտում է անսահմանության ու հավերժության և մարգկային հոգու մահը տիեզերքի ժամանակի ու տարածության մահն է: Բնությունը և մարդը հարաբերում են միմյանց անխզելի կապերով, մարդու հոգին բնության անգրագարձն է:

Իսահակյանի պոեզիայում կյանքի բանաստեղծական իմացությունը լիցքավորված է իմաստասիրական մտածողությամբ: Ժամանակը և տարածությունը, պատճառն ու հետևանքը, կամքն ու նպատակը, տգեղն ու գեղեցիկը բանաստեղծական խորհրդանիշեր լինելով՝ միաժամանակ աշխարհի իմացության, իմաստասիրական հասկացություններ են: Տակավին 1892-ին տասնյոթամյա Իսահակյանը իր հուշերում գրանցում է հետևյալ

խոստովանութիւնը. «Ես երգվում եմ իմ դավանած սրբութիւններով՝ իմ կամքի հզոր ուժով հաղթել արգելքներին ու խոչընդոտներին . արհամարհել աշխարհային թովիչ կյանքը, նրա փառքն ու պատիվը՝ միայն այն վեհ սեղանի համար, որի վրա բարձրանում է գիտութիւնը՝ անհաղթ, սուրբ, անմահ ու ճշմարիտ գիտութիւնը ... սիրել գիտութիւնը և ապրել գիտութեամբ»³³: Մտահայաց գաղափարների, «պրոգայիկ» ու աննպատակ կյանքի ունայնութիւնը մերժելով, Իսահակյանը հասարակական օդտակար գործունեութեան մղումով իր միտքն զբաղեցնում է փիլիսոփայութեան, հոգեբանութեան, պատմութեան, լեզվաբանութեան, աստվածաբանութեան, քաղաքականութեան, բարոյագիտութեան ուսմունքներով, որոնում «ստիպմունքով պատասխան» պահանջող հարցերի լուծումը:

Իսահակյանի աշխարհայացքի ակունքները ճանաչելու տեսակետից ուշագրավ է հետևյալ խոստովանութիւնը. «Երիտասարդութեանս տարիներին տարբեր փիլիսոփայական սիստեմներով շատ եմ տարվել՝ պեսիմիզմ, անարխիզմ, հափշտակվել եմ Բուդդայով, Շոպենհաուերով, մանավանդ Նիցշեով, մարգկութեանը ամեն տեսակի ճնշումներից, տառապանքներից ազատվելու ուղիներ էի որոնում»:

Միանգամայն ակնհայտ է Իսահակյանի համակրանքը Նիցշեի փիլիսոփայութեան հանդեպ: Նա թարգմանել է Նիցշեի երկու բանաստեղծութիւնները, որոնք պատկերում են «Մարգարեի» և «Մուսայի» կերպարները՝ ըստ Նիցշեի և Զրադաշտի: Նույն այս տրամադրութիւնները արտացոլվել են Իսահակյանի պոեզիայում բանաստեղծի մտքի թափառումները տանելով դեպի Արևելքի ու Արևմուտքի իմաստութիւնների խորհուրդը, դեպի անիմանալիութեան տիեզերաշունչ հարցերը: Իսահակյանին հատկապես գրավել է Նիցշեի գերմարդու տեսութիւնը: Գերմարդը մարմնավորում է այն հերոսի կերպարը, որը հակված է որոնելու ճշմարտութիւնը, հաղթելու գոյութեան կռիվում և կանխելու անհատի փոշիացումը բարոյականութեան քայքայման արդի հանգամանքներում:

Եվ այսպես, ուսումնասիրելով և խորապես յուրացնելով Արևելքի և Արևմուտքի փիլիսոփաների և մտածողների հայացքները, Իսահակյանն ստեղծեց իր փիլիսոփայութիւնը, աշխարհընկալման իր կերպը, որի թանձրացումը կարելի է համարել «Աբու Լալա Մահարի» պոեմը, ուր սուրահ առ սուրահ ընթերցողի հոգում վառում է ատելութեան կրակը, հիասթափութիւնն ու հեռացումը: Ժխտելով ու լացառելով «հեքիաթ աշխարհի» գեղեցկութիւնների հիմքերը քանդող երևույթները, պոետը իր հոգեկան ճգնաժամը լուծում է անհատապաշտական փախուստով դեպի անապատ, արտահայտելով հիասթափութիւնը իր «քաղաքակիրթ» ժամանակի հանդեպ:

Հայաստանում կատարվող իրադարձութիւնները, առաջին անկախ հանրապետութեան ստեղծումը, ապա նաև խորհրդային կարգերի հաստատումը խթանում են Իսահակյանի ցանկութիւնը՝ վերադառնալու հայրենիք: Նրա պոետական զգացողութիւններում նկատելի է դառնում «հայրենի հողի» կանչը, հող, որ ծնել ու սնել է նրան և որտեղ իր նախնիներն են դարձել հող: Հիասթափութիւնը Եվրոպայից հասնում է ծայրակետին՝

33 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 32:

«Եվրոպացիներն միայն մի աստված ունի՝ տնտեսական շահը» և ինչպես է-
գոիստ է եվրոպացին, նույն էգոիստ ու ցինիկ են եվրոպական պետութ-
յունները: Նա հավատ է տածում Ռուսաստանի նկատմամբ, գտնելով, որ
հայ ժողովուրդը պետք է երես գարձնի ավագակաբարո եվրոպայից և
կողմնորոշվի դեպի Ռուսաստանը՝ «ինչ ձեռն տակ էլ նա ներկայանա»:
«Հայ ժողովուրդը կարող է ապրել միայն Ռուսաստանի հետ, կամ բնավ չի
կարող ապրել»:

1921-ին Իսահակյանը Վենետիկում գրում է «Հայաստանին» խորագ-
րով բանաստեղծությունը, որը մի հոյակապ ներբող է հայոց պատմութ-
յան, հայ ժողովրդի գոյություն և ստեղծագործ ոգու:

Դու երկնամերձ իմ հայրենիք, դու և, հինավուրց, ի՞մ Հայաստան,
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՞մ Հայաստան,
Դու, ալևոր տեսիլների աստեղագոծ իմ Հայաստան,
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք, ի՞մ Հայաստան:

Հայաստանի սրբությունները, ավերված քաղաքներն ու շենքերը,
Հայաստանի անցյալն ու ներկան բանաստեղծական պատկերներում դառ-
նում են Իսահակյանի խոհերի ու մտորումների առարկան: Քնարական մի
հոյակապ գյուտ է «Ռավեննայում» էքսպրոմտը, որ Իսահակյանի խոստո-
վանությունները իր ամենասիրված բանաստեղծությունն է՝ արժանի «համաշ-
խարհային պոեզիայի անթոլոգիային»:

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես
Ու անցել:
Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին,
Ու անցել:
Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս դագաթին,
Ու անցել:
Հերթը հիմա քոնն է մի պահ,
Դու էլ նայիր սեգ ճակատին
Ու անցիր ...

Իր մտերիմների, գրականության ու մշակույթի գործիչներին՝ Հովհ.
Թումանյանի, Մ. Սարյանի, Պ. Մակինցյանի, Դ. Դեմիրճյանի հրավերները,
ապա նաև Ե. Չարենցի հետ վենետիկյան հանդիպումներն ազդակներ են
տալիս Իսահակյանին վերադառնալու հայրենիք և նա հոգեբանորեն կողմ-
նորոշված, սպասում էր հանգամանքների դասավորությանը: Եվ ահա
1926-ին տեղի է ունենում նրա առաջին այցը Խորհրդային Հայաստան:
Տպավորությունները հուսադրող էին, ընդունելությունը հանդիսավոր.
«Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը ... Հիմքերը լավ են դրված: Ե-
րանի՛ երիտասարդ լինելի և ընկնելի գործի, սև, չարքաչ գործի ծովում»:

Հայրենիքում Իսահակյանը անցկացնում է չափազանց բովանդակալից օրեր, հանդիպումներ է ունենում ժողովրդի ամենատարբեր խավերի մարդկանց հետ, այցելում է քաղաքներ ու գյուղեր, ամենուրեք ականատես լինում նորոգվող կյանքի անակնկալներին: Այդ տպավորություններով նա 1930-ին վերստին մեկնում է արտասահման՝ վերջնականապես վերադառնալու ակնկալիքով:

Արտասահմանում Իսահակյանը ներգրավվում է ազգային գործունեության մեջ, հանդես դալիս դասախոսություններով Խորհրդային Հայաստանի դրական ու հասարակական կյանքի մասին, նամակներ է հղում Հայաստանի պետական գործիչներին՝ Սփյուռքի հայության մտահոգությունների վերաբերյալ, գաղափարներ տալիս Սփյուռք – Հայրենիք կապերի ամրապնդմանը, արտահայտում իր մտահոգությունները Խորհրդային Հայաստանում կատարվող անցյալի դեպքերի, մտավորականության հալածանքի և բռնությունների դեմ:

Ինչ էլ լինի հայրենիքը վեր է ամեն ինչից և այդ համոզմունքով Իսահակյանը 1936 թ. վերադառնում է Հայաստան: Վերջնականապես հանգրվանելով Հայրենիքում, Իսահակյանը դառնում է նորոգվող կյանքի ակտիվ մասնակիցներից մեկը: Քնարական իր մոտիվներում երգում է հավերժող հայրենիքի թռիչքներն ու խոյանքները, թափանցում լուսավոր պայագայի խորքերը, դառնում հայ խորհրդային գրականության փառաբանված նահապետը և մինչև իր կյանքի մայրամուտը մնում է խաղաղության համար սլոյքարի առաջամարտիկներից մեկը: Բանաստեղծի հոգեկան ու պաշտպանական վերափոխումները տասնամյակներ շարունակ ուղեկցում են հակասական մեկնաբանություններով: «Ոմանք, – դրում է Հր. Թամրազյանը, – դժվար են հասկանում այս վերափոխության բուն իմաստը, այլ բացատրություն են տալիս Իսահակյանի հոգեկան ու գաղափարական անցմանը ... Մեծ բանաստեղծի հոգեկան դրաման ու հակասությունները պատկանում են ժամանակին, կապված են հայ ժողովրդի երբեք ու անկայուն վիճակի հետ ... ժողովրդի բանաստեղծը նրա ճակատագրի բոլոր նշանավոր անցումների և նորագույն բախտի պահին չէր կարող ժողովրդի հետ չլինել»³⁴:

Ժամանակի հետ Իսահակյանը ընտելանում է կյանքի նոր հանդամանքներին, ներգրավվում ստեղծագործական և ազգային – հասարակական դործունեության մեջ: Շրջում է հայրենի բնաշխարհում, մոտիկից դիտում հայ շինականի կենցաղն ու ապրելակերպը, ապա նաև շփվում Մոսկվայի և այլ ժողովուրդների դրական գործիչների հետ: Նրա պոեզիայում նկատելի է դառնում բնության զարթոնքի և կյանքի գեղեցկության մոտիվների երգը: Բանաստեղծը երազում էր շրջել Ղարաբաղում, իր պայպերի ծննդավայր Հին Բայազետի հեռուներում, զգալ Բինդուլի լեռների, Արաղածի ու Մանթաշի գեղատեսիլ վայրերի հմայքը:

1939-ին Իսահակյանը դրում է «Մեր պատմիչները և մեր դուսանները» բանաստեղծությունը՝ նվիրված հայ էպոսի հազարամյակին: Սա նոր խոսք էր խորհրդային պոեզիայի պատմության մեջ: Այստեղ ընդհանրաց-

34 Հ. ր. Թ. ամ. ր. ա. գ. յ. ա. ն. Բանաստեղծը և ճակատագիրը. Երևան, 1978, էջ 115-116:

ված է Հայոց պատմության փիլիսոփայությունը, նրա ստեղծագործ ոգու, գոյատևման ու մաքառման առասպելական արարչությունը.

Մեր գեղը ու կի պարզ խրճիթում, սուրբ օջախի շուրջ նստած՝
 Գուսանները մեր խանդավառ, առջևները գինի և Հաց,
 Վիպերգեցին Հաղթանակը դյուցազնների մեր մեծադոր
 Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների մեր բյուրավոր:
 Եվ Հյուսեցին պատմությունը Հավերժացող ժողովրդի,
 Վառ Հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի.
 Տեսան շքեզ մեր ապագան, անրնկճելի աղատ ոգին,
 Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացրած թուր - Կայծակին:

Երկրորդ համաշխարհային պատերազմն անակնկալ դույժ էր Իսահակյանի համար: Նրա հիշողության մեջ տակավին թարմ էին Հայոց եղեռնի սարսափները, և թուրքական բարբարոսությունների հանդեպ կայզերական Գերմանիայի հովանավոր դիրքորոշումը: Այժմ ահա «գազան Հիտլերը արյան ծարավի» կրկնում է իր նախորդների ոճրագործ ծրագիրը: Հայ ժողովրդի համար եկավ Հատուցման ժամը՝ վրեժ լուծելու կայդերական Գերմանիայի հետնորդներից՝ Հիտլերյան Ֆաշիզմից: Պատերազմի չորրորդ օրը Իսահակյանը գրում է «Ռազմակոչ» բանաստեղծությունը, որը մի իսկական հրովարտակ էր ուղղված աշխարհի առաջագեծ մարդկությանը, վրեժ լուծելու անարգ թշնամուց, որն սպառնում է Հակամարդկային բնադրների մղումով ոչնչացնել քաղաքակրթությունը: Ապա հաջորդում են հրապարակախոսական ելույթները «Փաշիզմը պիտի խորտակվի», «Նոր տարվա շեմին», «Մահ գերմանական օկուպանտներին», «Հայրենական պատերազմը և Հայ ժողովուրդը», «Հաղթանակը պրոդրեսի կողմն է», «Մղձավանջը վերջացավ» և այլն, որոնց մեջ նշավակում է Ֆաշիզմի պարզուլիսներին ու Հավատ ներշնչում թշնամու ջախջախման և Հաղթանակի անխուսափելիության նկատմամբ: Միաժամանակ Իսահակյանը անդրադառնում է Հայ հանճարի ստեղծած արժեքներին, գովերգում ճարտարապետական կոթողների, տաճարների, խիզախ երևակայության ստեղծումները: Այդ արժեքները սերունդներն ավանդել են մեզ՝ որպես Հայոց հանճարի ու անմահ փառքի պատմություն: Այդ անդրադարձը պատահական երևույթ չէ, դա հենց ուղղված է պատերազմի դեմ, դա դոյուլթյան վկայությունն է մի ժողովրդի, որն իր ավանդն է ներդրել համաշխարհային քաղաքակրթության մեջ: Ազդային Հպարտության գդացումով են տոգորված Իսահակյանի խոսքերը, թե «մեր վերնաշենքը բարձր է, այնքան բարձր է, որ հեռվից, շատ հեռվից մարդիկ տեսնում են այդ շենքի բարձունքները – դազաթները՝ ամեն ասպարեզի վրա–լինի սլոնգիա թե՛ նկարչություն, լինի ճարտարապետություն թե՛ երաժշտություն: Թեև մենք քանակով փոքր ենք, բայց մեծ ենք և հարուստ»³⁵:

Տարիներն ավելանում են, կյանքի փորձով իմաստնացած բանաստեղծը վերին Հայացքով նայում է անցավոր աշխարհին, մարդկանց, իրերին, փիլիսոփայորեն վերլուծում կյանքի ու մահվան հավերժական պրոբ-

35 Ա. փ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, էջ 447:

լեմբ, գրի առնում իմաստասիրական իր խոհերն ու մտորումները. «Լինելի մանուկ, պատանի, նոր սկսելի կյանքս, առանց կրկնելու գործած սխալներս ... նոր սիրելի, նոր երգելի, նոր զգայի, նոր երագելի, նոր գործելի ... աշխարհք նոր սկսվեր ինձ համար ...»³⁶: Հենց այստեղ է գոյություն խորհուրդը և հարատևության իմաստը, իդեալ և հեռանկար, ահա ապրելու կենսունակ շարժումը, առանց իդեալի մարզն ու ազգերը հանգում են ոչնչացման. «Մեր իդեալը – ազատ Հայաստան, ոսկեդարյան Հայաստան, ազատ Մասիս»: Արարատը, Արագածը, Արփանը, Բինգյուլը՝ Հայ ժողովրդի հավերժության վկաները ուղեկցել են բանաստեղծին, դարձել երգ ու հոգու կանչ: Բայց Անին ուրիշ էր: Անիի կարոտը Իսահակյանի հոգու աղամանդալ գանձն էր, որ փշրվել է բանաստեղծի ամենօրյա խոհերում, բայց մնացել հավերժ սիրելի տենչանք ու փափագ. «Անի՛ ... քարակերտ բանաստեղծություն, քարացած երազ: Այստեղ կատարյալ գաղափարը նյութացավ և այստեղ հասարակ նյութը գաղափարացավ ... Կատարյալի, գեղեցիկի գաղափարը նյութացավ ... Անի՛, մի աշխարհ, զգացմունք, մի ողջ աղբ, հայության սիմվոլ, խորհրդանիշ ... Դու մեծ ես իմ ազգ – իմ Անի, քո ստեղծած ոգով, քո գեղեցկով, քո որակով, քո դազափարացած նյութով և նյութական գաղափարով ...»³⁷: Անիի նկատմամբ ունեցած սիրո բանաստեղծական արտահայտությամբ Իսահակյանը կարծես ավանդում է իր կտակը՝ «Սիրտս խաղաղվեր, հանգչելի հավերժ Անիի անմահ պարիսպների տակ ...»:

Իսահակյանը համամարդկային մակարդակ ու չափանիշ տվեց Հայոց ազգին և ինչպես ապրել էր իմաստուն, նույնպես և ունեցավ իմաստուն մահ՝ և իր անունը հավերժացրեց, Արադոնի բնութագրմամբ՝ XX դարի համաշխարհային պոեզիայի պայծառ անունների շարքում՝ Կիպլինգ, Ապոլիներ, էլյուար, Ռիլկե, Լորկա, Եսենին, Չարենց:

Այսպես Իսահակյանը գնաց դեպի պանթեոն, դեպի անմահների պանթեոնը, ուր հանգչում է Հայ Հանճարը, մեր ազգային ուտոպիայի ձգտումը հղելով դեպի ազատ ու անկախ Հայրենիքի ապաստանը:

36 Նույն տեղում, էջ 446:

37 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Արվեստի մասին. Երևան, 1977, էջ 54 - 57: